

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ *

Ժ.Բ.

Աբովեանի գործունէութիւնը Երեւանում:

Տխուր սրտով թողեց նա Թիֆլիզը, անցաւ Գեղաքունեաց լեռները, տեսաւ Սևանի միայնակեաց մենաստանը, ապա Մասիսը, Այրարատ, Էջմիածին: Որքան ծանր էր թողնել իւր ազնիւ բարեկամներին, բայց որքան ուրախալի էր ապրել, կեանք քաշել այնտեղ, որտեղ իւր մանկութեան օրերն է անցկացրել, ծծել այն օդը, որ չնչել են իւր հայրն ու մայրը, ազգականները և վերջապէս աղդի նշանաւոր որդիքը:

Հայաստանի սիրտը իւր կանաչազարդ այգեստաններով փուռում է նրա ոտքերի առաջ, հոդին սլանում է եթերային բարձունքները, դիտելու իւր հայրենի երկիրը, աւերակները՝ որտեղ չքեղազգեստ դշույներին փոխարինել են բուերը, փառաւոր պալատներին մամուպապատ վիլատակները:

Այս տուաւորութիւնները հետզետէ յետ են մղում նրանից նախկին ծանր մտքերը: Զգացուած սրտով թափում է իւր սրտի ամրարածը «Մուտ ի հայրենիս» ոտանաւորի մէջ¹⁾:

*.) Տես Շումայր Բ. ա. գիրք Ա.

1) Գաւազան զշոր թողեալ պանդիստին
Դիմէ առ քեզ այժմ սիրով կաթողին,
Որդին կարուտեալ ի գիրկս քո հանգչիլ
Փութա աստանօր մայր իմ թանկագին....

Երազք և անուրջք՝ տեսիլք և իմ միտք
Քո չէին միթէ մինչև ցարդ հովհանք,
Քո անոյշ լերինք, Քո դաշտք երկնանմանք,
Որոց բուռն սիրով մաշիւր իմ սիրտ միշտ...:

Տեն այս իշխանաց ճոխս բնակարանք
Տեն չքոյ, փառաց քարոզ այս տապանք
Բուռն ժամանակին դարձեալ այժմ ի կիր,
Ուր երբեմն փայլէրն վեհից դամարճակ....

Տօնեմ զբո տեսիլ՝ սեղան սրբութեան՝
Տօնեմ, փառաւորեմ զանունդ յաւիտեան,
Փառքդ Հայաստանի, գերտմբարձդ Մասիս,
Համայն դու ազգաց ուխտի սուրբ արձան:

Գնայած որ մի քանի անգամ եկել էր Աբովեանն իւր հայրենի դիւղը, բայց հասարակութիւնը—համագիւղացիք չէին ճանաչել նրան. դեռ նրա ազնիւ սիրտը չէին նկատել, դեռ գնահատելու արժանի ոչինչ չէին գտել, ուստի առաջին անգամներում ընդառաջ գնացողներ չեն եղել, բայց այս անգամ Աբովեանը տեսուչ էր գալիս Նրեանին նահանգական դպրոցի. «այէաք է գնայ, քանի որ նա այժմ մեծ մարդ է, նա կարող է մեղ օգնութիւն անել», այսպէս են խօսեցել քանաքեռցիք և մեծ խմբով դիմաւորենու գնացել մօտիկ կայարանը, Ուրբաներով ընդունել են և կեցցէներով համբուրուել:

Հէնց նոյն տեղը կառքի անիւը կոտրուեց և մինչեւ շինելը մեր քէփն էր հարցնում (Քանաքեռցի). խօսում է նրանց կենցաղավարութեան մասին և իր կողմից խրատներ տալիս ապրուսի, վարուցանքի, այդեղործութեան և առաւելապէս ուսուման մասին:

Ապա կառքին հետեւելով մեծ շրով բերել են նորան Քանաքեռ, այդ օրը մեծ բազմութիւն էր հաւաքուել տեսնելու իրենց հայրենակցին և նրա այլազգի ամուսնուն, որ ամենից շատ էր հետաքրքրութիւն գրաւել Սղբարքը շատ մեծ պատուով են ընդունում. մայրը ուրախութիւնից լալիս էր, քանի որ այնուհետև Խաչատուրը պիտի Նրեան մնար իրենցից մօտիկ:

Իրը զերմեռանդ հայ նա դալուց անմիջապէս իւր բոլոր բարեկամներով գնաց Գեղարդ ուլսուն: (Քանաքեռցի):

Մի քանի օրից յետոյ նա թողեց Քանաքեռը, շտապեց Նրեան ստանձնելու տեսչի պաշտօնը: Այն անհուն սէրը, որ նա ունէր դէպի իւր հայրենիքը, այն խանդոսութեան հասած կիրքը, որ միշտ վառել և բորբոքուել էր նրա մէջ սուրբ նպատակի համար, այժմ աւելի ևս մեծ ասպարէզ է գտնում: Նա իրը անխոնջ մշակ ուսուցանում էր, իրը անիւաս վարդապետ վարդապետում էր «ոչ որպէս արուեստ ուսուցանէր, այլ իրը զհոգի առաքելաբար աշակերտելոցն տայր»:

Այն յարաքերութիւնները աշակերտների հետ, ինչ որ ունէր Թիֆլիզում, աւելի ևս կապում է այստեղ իւր հոգմոր զա-

Պահեա միայն հայր, դաշխարհ և զորդիս

Անփորձ անսասան ի կենցաղս յաստիս,

Մի այլ միեսցեն մեղ հեղհեղք կործանման,

Մի հայր քաղցրադութ՝ յապայն կամ զարդիս:

Սուրբ եկեղեցին մեղ կաթիք ձեր արեան,

Սուրբ յիշատակ ձեր հոգիք պատուական,

Հիմնադիրք ազգի, փրկիչը աշխարհի,

Հսկայք երկնածնունդք անմահք անլախճան:

(Ցիշատ. Պ. Ղօրդան.)

ւակների հետ: „Սրովիանի դուռն աշակերտների համար միշտ բաց էր, երբ ուզենայինք կարող էինք զնալ“: (Վ. Խուղաբաշ):

Հանդիսաւոր օրերին, տօներին հաւաքում էր աշակերտներին դպրոց, բացատրում էր օրուայ նախակութիւնը, ապա փող էր տալիս հասակաւորներից մի քանիսին որ գնան միրգ առնեն, իսկ ինքը միսա աշակերտների հետ միասին դպրոցական ճանապարհորդութիւն էր կատարում դէպի մօտիկ այդիները կամ կարչախանոս Զանգում գեղեցիկ ափերը: Միրգը բերում թափում էին իրենց առաջ կանաչ խոտի վրայ և հանաքներով ու սրախօսութիւններով ուստում էին: Մրգից յետոյ արգելում էր ջուր խմելը: Ապա խաղեր էր սարքել տալիս: աւելի շատ սիրում էր ցատկելը:

Այդիների մէջ փոքրիկ ծառեր տեսնելիս—բոյսեր նկատելիս անմիջապէս դրանց մասին էր խօսում, գիւղատնտեսական զանազան հարցեր էր չշահում և ապա պատուիրում էր որ իւրաքանչիւրը մի հատ հանէ, որպէս զի ուսումնարանի բակում—իրենց մարգերի մէջ տնկեն: Աշակերտները բաժանուած էին խմբերի: իւրաքանչիւր խումբ մի մարդ ունէր, որտեղ ծաղկեներ էին ցանում և ծառեր տնկում: Արովիանը սովորեցնում էր պահելու եղանակը, խնամելու միջոցները, որքան ինքը գիտէր և լսել էր ուսուցիչներից:

Աւելի յարմարաւոր և գեղեցիկ օրերին տանում էր աշակերտներին Զանգուի մէջ լողանալու, նախորօք դրուած պատուէրներով: Աշխատում էր որ սպարտացիների նման իւր բոլոր աշակերտները լողանալ սովորեն:

Ջմեռ ժամանակ տօներին նոյնպէս չէր թողնում, որ աշակերտները պարապ անցկացնեն: հաւաքում էր դպրոց և կրկին միրգ բերել տալով, ուրախացնում էր: ապա զանազան զուարձալի պատութիւններ էր պատմում, խրատներ կը տար հեռու կենալ մօլութիւնից, շուայլութիւնից: Բոլորը յափշտակուած լսում էին նրան. (Վ. Խուղաբաշեան):¹⁾

Իւր աշակերտներին բոլորին անունով էր կանչում և ոչ ազգանունով ինչպէս շատերն արել են և անում են. աշակերտ-

¹⁾ Մինչկ այսօր պ. Վ. Խուղաբաշ. շատ լսւ յիշում է հետեւալ երկու անեկդոտները:

Մի գերմանացի շատ հարուստ կին ցանկանալով իւր անթիւ գանձերով ուրիշի աշքերը շլացնել, մի անդամ իւր մօտ հիւրեկող Յ կնոջ պատուելու համար հրամայում է ահագին ծախսեր անել և միայն մըգի համար 5000 ը. տալիս:—Դուք առացէք, աղջակը, արժէ այդքան փող միսել միայն մըգի համար, մըթէ այդ փողով չէր կարելի մեծամեծ գործեր կատարել, հարիւրաւոր որը տղաներին ուսում և կրթութիւն տալ:—Ինարկէ կարելի է և պէտք է, պատասխանում էին տղաները:

ներն էլ „պ. Աբովիան“ էին կանչում, քանի որ նա պատուի-ըել էր ոչ մի ժամանակ իրեն վարժապետ կամ վարդապետ չասել:

Նրա մտերմական յարաբերութեան մասին դէպի աշակերտ-ները և խալֆայական ուղղութեան խապատ վերացնելուն համար տմբողջ քաղաքում հիացմամբ խօսում էին: Հոգևոր դպրոցի ա-շակերտները տեսնելով որ Աբովիեանն այնքան քաղցրութեամբ էր վերաբերում դէպի իւր աշակերտները, բոլորն երանի էին տալիս: Քանի որ խերներն ամեն ժամանակ վալախայի հա-րուածների տակ այնպիսի օրի էին ընկնում, որ ստիպուած էին վիճում շարաթներով տանը նստել: (պ. Նազար Տէր-Աւետի-քեանց):

Բացի իւր աշակերտներից, որ այնքան միմիթարութիւն էին պատճառում, Աբովիեանն ունէր մի տղայ և մի աղջիկ (Մօրից կամ Վարդան, Ադուայիդա կամ Զարմանդուխտ). գերմանական ա-նունները կինն է դրել, իսկ հայկականը ինքը): Երեխանների համար առանձին կառք էր շնոել տուել որ միշտ զքօսնելուտա-նէ: Աղջկան որդուց աւելի էր սիրում (ըստ ասութեան տ. Զ. Բաժեսկու), նրան միշտ ուսերի վրայ նստացրած ման էր ա-ծում. գիշերը՝ քնած ժամանակ անդամ գնում էր համբուրում աղջկան և լացացնում. քանի-քանի անդամ կինը խնդրել է, որ երեխային անհանգիստ չանէ, սակայն սիրող ծնողն ուշաղրգու-թիւն չէր դարձնում: Սանուկ հասակում երեխանները սովորել էին կարդալ-դրել թէ հայերէն, թէ ոռուերէն և թէ գերմաննե-րէն. Փոքրիկ ոտանատորներ էր սովորցնում և լաւ արտասա-նողին պարգև էր տալիս (Հէնց այս է պատճառը, որ պ. Վ. Ա-բովիեանի ոռուերէն արտասանութիւնը կատարեալ ոռուական է):

Այդ ժամանակ Երեխան է գալիս Արիխ ճանապարհորդը Ներսէս Աշտարակցու յանձնարարական նամակով Աբովիեանի անունով: Վերջինս ընդունելութիւն ցոյց տալուց յետոյ՝ ուղեկցում է նրան: „Պատիւ, յարդանք, ընդունելութիւնք և յօժարակամ պատրաստութիւն մերազնեայց ի մեծէ սկսեալ մինչև ցփոքու-

Մի հարուստ ժլատ, որ իւր գլխարկի համար փող չէր տա-
լիս, այլ միշտ փողոցում կամ աղբանոցում ընկածը կը վերց-
նէր, ունէր մի խստ շուայլ տղայ: Վերջինն ամեն օր խնջոք-
ներ էր սարքում, հարիւրաւոր մարդիկ էր հրաւիրում և տաս-
նաւոր ոչխարներ, եզներ էր մորթում, քէֆ անելով վատնում
հօր ունեցածը:

—Հիմա տեսէք, ահազին կարողութեան տէր մարդը դը-
խարկը աղբանոցից է վերցնում, իսկ որդին մի քանի տարում
ուղում էր հօր ունեցածը ոչնչացնել: Միթէ այդպիս պիտի լի-
նէր հայրը կամ որդին.—ինարկէ ոչ, պատասխանում էին աշա-
կերտները:

նըս, և ամենայն ուրեք, մանաւանդ ի սուրբ Աթոռն մեր եջ-
միածին նպաստամատոյց գտանել յամենայն զօրութենէ դիտա-
ւորութեանց այնը գիտնականի՝ անցին անցին անդր քան զշա-
փըն: Միմիայն Տիրահրաւէր շունչ Ձերդ վեհափառութեան բա-
ւական էր ի բորբռքել յամենայն զգայուն սիրտ Հայկազանց զո-
հել նմա և զկեանս անդամ: Եւ ոչ մի գիտնական ճանապար-
հորդ նախ քան զսա եղիտ և գտցէ զայս օրինակ եռանդնա-
փոյթ ջերմեռանդութիւն ի կատարումն կամաց քոց⁴. (Փոքձ):
Բացի Արարատեան աշխարհը մանդալուց նոքա անցնում
ևն սահմանը—Բայազիտի և Մակուայ գաւառները:

Արթիսը բոլորովին գոհ սրտով հեռանում է Արովեանից,
խնդրելով միշտ և միշտ յիշել իւր թանկագին նամակներով:

Քաղաքում հէնց սկզբից Արովեանը յայտնուել էր իրեւ
առաջնակարգ մարդ. ամեն մի նշանաւոր հանդիսին կանչում
էին, ուր շատ անդամ չէր դնում ամուսնու պատճառով. վերջինս
խոյս էր տալիս խնջորքներից առարկելով որ լեզուն չի հասկա-
նում. ուստի և նա շատ տեղեր չէր յաճախում, մտածելով գու-
ցէ միայնակ լինելս—իմ և կնոջս անհամաձայնութեամբ կամ ան-
հաշտութեամբ բացատրէին:

Խնջորքներում դէպքից օգուտ քաղելով խօսում էր հասա-
րակութեան հետ զանազան խնդիրների մասին. աշխատում էր
բանալ հասարակութեան միտքը դէպի ուսումն ու յառաջադի-
մութիւն: Գերմանացիների նիստ ու կացը, կենցաղավարութիւ-
նը նրա խօսակցութեան մեծ նիւթ էին տալիս: Սեղանի վրայ
առհասարակ մի բաժակից աւելի գինի չէր խմիլ: Եթէ ըստ ըն-
դունուած սովորութեան ստիպէին, անմիջապէս կը թողնէր և
գուրս կը դար, իւր այսպիսի չափաւորութեամբ տամնքին գե-
ղեցիկ օրինակ էր տալիս:

Երրեմն այցելում էր իւր ծննդավայր գիւղը կամ մենակ
կամ հիւրերով. կրօպացի շատ ճանապարհորդներ մեծ յարգանք
են վայելել Արովեանց ընտանիքում: Բանաստեղծ Բօղենշղետը
շտա գեղեցիկ ընդունելութիւն է գտել. հայկական ընտանեկան
մաքուր կեանքը, ամօթխածութիւնը հիանալի գոյներով է նը-
կարագրում նա:

Դիւղում նա չէր քաշուիլ ժողովրդից. այլ ընդհակառակը
միշտ բալորի հետ շիւում էր, խորհուրդներ էր տալիս. ամեն-
քը զարմանում էին նրա այնքան քաղցր բնաւորութեան և բարի
խրատների վերայ: Այն գեղեցիկ խօսքերն, այն խրախուսական
քարոզներն, որ երիտասարդը ուղղել է իւր համագիւ-
ղացիներին, մի առանձին հրճուանքով մինչև այժմ պահուել է
ժամանակակից մարդկանց բերանում¹⁾:

1) "Գիւղական կեանքը գովելի կեանք է, ուս սուրբ գործ
է, չպէտք է ձեռքից տալ: Մենք թէս ուսումնական ենք, բայց

Գիւղացիք իրենց բաղդաւոր էին համարում այդպիսի միքարեկամ և ծանօթ ունենալով, ամեն օր հրատիրում էին իրենց տները, միասին քէֆեր էին անում: Երբեմն հասարակական ճաշ էին տալիս աւելի շատ՝ մօտակայ ծարաւաղիւր կոչուած տեղում: Վերադարձին գիւղացիների հետ խաղում էր, ոմաս խար ու թիւն ներ՝ անում:

Քանաքեռցիք մինչև այսօր օրհնութեամբ են յիշում նրա անունը, որովհետեւ ամբողջ գիւղի համար մի նշանաւոր բարութիւն և օգնութիւն է արել: Զորան-քեարա կոչուած թուրք դաղթականները գալով բնակութիւն են հաստատում Քանաքեւուի հողի վրայ և դաշտի միակ աղբիւրին տիրում: Գիւղացիք միջնորդներ են ուղարկում որ թողնեն իրենց հողը և դնան ուրիշ տեղ, սակայն չեն կարողանում հեռացնել քանի որ արդէն տներ են շինել, այդիներ տնկեր Ոյժն անդամ ոչինչ չէր շինիլ Զորան-Քեարա բարբարոս թուրքերի դէմ: Այսպիսի նեղ ըսպէին ժողովուրդը յիշեց իւր թանկագին բարեկամին, տափարիւն տղամարդն անմիջապէս գիմեց ուր հարկն է և մի խումբ կողակներ առնելով հեծեալ գիւղացիների հետ գնաց Զորան-Քեարա և ստիպէց անմիջապէս թողնել իրենց բնակարանները և հեռանալ Քանաքեռցիների հողից: Թուրքերը ցանկացան հնազանդուիլ, նա բերել տուեց տանուտէրին և կրկին ստիպեց, սակայն անօգուտ. ընդդիմութիւնը սաստկացա, տեսնելով որ առանց ոյժի ոչինչ չէ լինում հրամայեց կօղակներին ծեծել տանուտէրին, Քանաքեռցոց էլ հրամայեց գութանի շղթաներով կապեն տների գերանները և գոմէշներ լծերով քանդեն, թուրքերը վերջապէս համոզուեցան, որ այս մարդու ձեռքից չպիսի աղատուին և զործը շատ վատ է գնում, սկսեցին իրենք իրենց հաւաքուիլ և գնալ ուրիշ տեղ: Ապա հրամայեց բանալ այն

կը գայ ժամանակ, որ կը զրկուենք մեր վարած պաշտօններից և չենք կարող ապրել, քանի որ անընդունակ դարձած լինելով չենք կարող հողը մշակել, որ միակ միջոցն է կեանքի համար: Աշխատեցէք, ձեր հալալ աշխատանքը ձեռքից միք տալ: վար ու ցանը պատուական արհեստ է, Աստուած օրհնել է մշակե ձեռքի նեղութիւնը: Մենք մեր դօնաղների համար հարիւր ուռութիւնք ենք մսխում, ոչինչ լազաթ չենք տեսնում, իսկ դուք ձեր ունեցածով շատ պարզ և ուրախ էք անցկացնում քաղաքացիներին նախանձի ձգերով: Սրանով չեմ ուղում ասել, որ ձեր երեխներին հէնց սկզբից տուէք միմիայն դաշտային աշխատանքի, ոչ, դրա հետ պէտք է միացնել և ուսումը, քանի որ դրանով նա կարող է աւելի հեշտ և լաւ ապրել: Պէտք է երկուսով միանանք, այսինքն դուք, դաշտայինը սովորացնէք, իսկ ես գրքինը, այս ժամանակ երջանիկ մարդիկ կունենանք”:

(Քանաքեռցի)

աղքիւրն, որը կրուի ժամանակ ծածկուել էր թուրքերից։ Այս-
պիսով մի օրուայ գործունէութեամբ մօտ 6,000 դեսեատին հող
ձեռք բերաւ իւր սիրելի և ազիկ զիւղացիների համար. իսկ
ժողովուրդը մինչև այժմ Մուրադ Թափի հետ կապել է և Արո-
վեանի ամահ անունը։)

Տօն օրերին ինչպէս որ խօսում էր և հասկացնում էր օր-
ուայ նշանակութիւնն, այսպէս էլ բացատրում էր եկեղեցու վե-
հութիւնը։ Աշակերտներին միշտ տանում էր եկեղեցի, հանդի-
սաւոր օրերին ինքը իւր փոքրիկ որդի Վարդանի հետ շապիկ
էր հագնում և դպրութիւն անում։ Ոչ միայն իւր դիրքովն
այլև յաջող ձայնով մեծ տպատրութիւն էր անում։

«Նատ երկիւղածութեամբ էր կանգնում եկեղեցում և միշտ
գէպի Աստուծոյ սեղանը մտիկ տալիս. ձեռներն այդ ժամանակ
չէր կախիլ—այլ ընդհակառակը ծալած կրծքին դրած. երեմն
աչքերի մէջ արտասուզներ էին երեւում։» (պ. Ա.ք. Դատեանց)։

Իւր աշակերտներին պատովիրում էր անպատճառ ժամ
գնալ մանաւանդ շաբաթ և կիւրակէ օրերը, չգնացողին նախ
և առաջ խրատում էր համոզեցուցիչ խօսքերով, յետոյ պար-
տազանցին խիստ պատժում էր։ Նրա այն խօսքերը, որոնցով
եկեղեցի էր հրամիրում, մեծ ազդեցութիւն էին անում լսողնե-
րի վրայ, ուստի և ոմանք նրա աշակերտներից անմոռաց կեր-
պով յիշում են։ «Ինչո՞ւ շաբաթը դոնէ երկու անգամ չպիտի
գնալ եկեղեցի, որտեղ մարդս իրեն այնքան ազատ է զգում,
ինչո՞ւ չպիտի յաճախել այն սուրբ տեղը, որտեղ մարդս զառ-
նում է մի նոր էակ, հոգով սլանալով Աստուծոյ մօտ. իրեն բո-
լորպիին թեթևացած է զգում ամեն տեսակ նեղութիւններից և
տառապանքներից։ Խորհուրդ եմ տալիս անպատճառ գնալ. մեր
սուրբ նախահարերը արեան թանգ գնով մեզ համար եկեղեցի
են թողել, միթէ չպիտի օգտուել այդ հրաշալի պարգևից, Աս-
տուծածային աւանդից։» (պ. Ա.ք. Դատեանց)։

Արովեանը շատերի աչքում փուշ էր դառել, ուստի զա-
նազան գյոյներով են նկարագրում այդ ժամանակի ուսումնա-
րանական մասի հոգաքարձուին. վերջինս յանդիմանական նա-
մակ է գրում, թէ ինչու ուսումնարանը թողած ուրիշ գործե-

¹⁾ Վերոյիշեալները պատմեցին ինձ քանաքեռոցիք իւրեանց
եկեղեցու բակում ներկայութեամբ նոյն գիւղի ծխատէր քահա-
նաների (Տէր Գէորգի և Տէր Զաքարիայի) 94 թ. ապրիլի 15-ին
աւագ ուրբաթ օրը, երբ ժողովուրդը ժամերգութիւնից յետոյ
նստել էր ննջեցելատէրերի տանից բերուած ուտելեղէնների
սեղանի առաջ։ Նատ գեղեցիկ ընդունելութիւն ցոյց տուին.
ստիպեցին ինձ մսալ իրենց մօտ մինչև զատիկ, սակայն չկա-
րողացայ մնալ. մինչև մութն ընկնելլ մի տանից միւսն էին
քաշում. ինձ հետ էր ուսուցիչ պ. Ա.ռ. Բաբայեանը։

ըով ես պարապում: Նատ չանցած նոյնը կրկնուում է: Զկարո-
ղանարով տանել այդ վիրաւորանքը հոգաբարձուի անտեղի պա-
հանջների դէմ գանգատ է ուղարկում ուղղակի լուսաւորու-
թեան նախարարին:

Իբրև կրպական կրթութեան տէր մարդ և լաւ հասկա-
ցած դպրոցական ճանապարհորդութեան բարձր նշանակութիւ-
նը, նա իւր սաներին երբեմ տանում էր ուխտի ո. Գեղարդ
և կամ զանազան տեղեր:

Մի անգամ շատ փառաւոր կերպով Գեղարդ են գնում,
ճանապարհորդութիւնը ձիով են կատարում, «Ձնայած մեծ
բազմութեան, այնու ամենայնիւ բոլորի ծախսն ինքն է
հոգում, Խմբի մէջ բացի հայերից մտան և երկու պարսիկ աշա-
կերտներ (Շափի-բէկ Հասանաղա Սուլթանով): Ճանապարհին շատ
ուրախ էինք, ձի էինք քշում. Քշելու ժամանակ Արովիեանը աշա-
կերտից առաջ չէր անցնում, յաղթութիւնը միշտ աշակերտի
կողմն էր թողնում: Շնրեկոյեան դէմ հասանք Գեղարդ, զեռ
վանք չհասած կողքին բնական քարէ մի դալդալը կար, մտանք
այնտեղ ձիանքը կապեցինք. ապա հրամայեց իսկոյն կրակ ա-
նել, Աշակերտներն իրենց խանչաներով փայտեր կոտորեցին
և մի քանի բովէում ահագին խարոյկ պատրաստեցին Եղանա-
կը մի քիչ ցաւու լինելով՝ պատուիերել էր բոլորին տաք հադ-
նուել և կրակից չնեռանալ, Մի քիչ հանգստանալուց յետոյ ըստ
հին սովորութեան սկսեցինք կրակով խաղաղ, Արովիեանը աշա-
կերտներին հրում էր դէպիլ կրակը, իսկ մենք էլ երբեմն իրեն
կրակի մէջ էինք ձգում և ներողութիւն խնդրում. սակայն բո.
լորովին չէր նեղանում ասելով փայտի ժամանակ մարդ կրակն
էլ կընկնի, փայր էլ կընկնի—խաղանք, ոչինչ: Ընթրիքից յետոյ
պառկեցինք քնելու, այդ ժամանակն էլ Արովիեանը զանազան
պատմութիւններ արաւ, որը չեմ յիշում¹⁾: (Երեկ Գեղարդի
պատմութիւնն արած կը լինի, որ անում է մի ուրիշ տեղ):

¹⁾ «Վաեմախոհ հոգին Հայկազանց՝ հչ կամելով տալ զնար-
տարագործ, այս և զանօրինակ այս շինուած վանից Գեղարդայ,
բաղկացելոյ յամբողջ ապառաժէ՝ մարդկային հնարից և հմտու-
թիւն՝ թողեալ է զշրթունս յետնորդաց զշքնաղածին զայս
ստեղծաբանութիւն զայս մտացածին, որ տակաւին և արժէ ի
մէջ Հայաստանեայց որդւոյ՝ հետազայ կերպիւս: Քոյր և եղբայր
յազնուատում տանէ, փափագելով թողով յաշխարհի զիշատա-
կարան անմահ, առանձնանայ այս ձոր, և սկսանին կերտել
զայս տաճար: Ի բազում ժամանակս ոչ գիտելով երիտասարդին
թէ ուստի սկսանիցէ զշինութիւն՝ խնդրէ յԱստուծոյ յայտնել
նմա զտեղին: Յառաւօտու միտում յարուցեալ ի քնոյ տեսանէ
զկուան իւր եղեալ ի ծայր ապառաժին: Անդ ի ձեռն տայ հա-
տանել զառիվայր, ուստի կոյսն Աստուածարան ի վեր հանէ

Առաւոտեան տարել է ուխտ, դիտել են վանքը ներսից, երկրպագութիւն տուել, մոմ վառել. պարսիկներն էլ հետևել են իրենց ուսուցիչն: Ապա ձիաները նստելով ուրախ զուարթ դարձանք, ճանապարհին «մենք վառք էինք տալիս Աստուծուն, որ այսպիսի մի մարդ, մի դանձ է ընկել մեր ձեռքը»:

Լու արամադրութեամբ, գեղեցիկ տպաւորութիւններով քշում են ձիաները դէպի աւերակների մի սրտամաշ կոյտ, որի կողքով խըշըշալով գլորում էր փոքրիկ գետակը: Հիանալի դիրքը և պատմական յիշատակաց արժանի վայրը ազդեց Արովեանի վրայ, չկամեցաւ շուտով թողնել սրբազն երկրի յետին բեկորները, ուստի և ասաց իւր աշակերտներին «տղայք,

հերօք իւրովք զամենայն բեկորս քարանց: Այս օրինակ շարունակելով զրագմաքիրան վաստակ իւրեանց, բանան հետզհետէ զյարդանդ վիմին ի հրաշակառոյց տաճար Աստուածալիին, յաւարտ որոյ մնան ինքեանք ի սպաս և ի բնակութիւն երկնամասն ձեռագործք իւրեանց, ուր կնքեն ի վախճանի և զկեանս իւրեանց երկնանուէր:

բ) Երկրորդ հրաշաբանութիւն այսպէս ճնշէ. (երկի հնչէ)

Աշխարհակալին Ենդ-Թեմուրայ՝ լուեալ զանուանելի հրաշագործութեանց սրբազն վանիցս և գորով հեթանոս ապառում անձամբ անձին դիմէ ի փորձ լինել պատմաբանութեանս: Անթիւ զօրօք յարձակի ի ձորն ամայի՛ հրամայէ յոխորտանօք և ծաղրաբաններով բերել նմա զսուրբ նշանս Գեղարդայ: Բայց այն ինչ ձեռք բարձրացուցանեն զնիզակն առ ի հարկանել զսուրբ նշանն աստուածային, յական թոթափել գունդք բիւրաւոր զօրաց անմարմնոց զրահաւորեալ և ի զգեստս երփներանգս յարձակին ի վերայ ամենուստեք: Թշնամին սուրբ հաւատոյ ոչ կարացեալ տանել անգամ և զտեսիլ զայս ահաւոր, տեսանելով մանաւանդ զշփոթ և զհարուած իւրայնոցն, յորոց բազմաց դէմ ի թիկունս դառնայ: այլոց ձեռք զօսանան, բազմաց կուրութիւն յաւիտենական վակէ զլոյսն տունջեան, այլք իբրև արձան անկենդան անդ մնան կարկառեալ, դառնայ առ իւրսն՝ ողբագին և գոչէ:

գ) Աշամ, Գեօրգէջ, որ տաճկերէն նշանակէ, Տէր իմ, տես անց, ապա մեծաւ հառաշանօք մաղթէ զթողութիւն, ընծայէ զպարգես մեծամեծս և դառնայ յետս: Այսպէս անուանեն մինչև ցայսօր և տաճիկը զսուրբ նշանն Գեղարդայ և ոչ պակաս ի Քրիստոնէից պաշտեն զայն:

դ) Վանքն սրբոյն Գեղարդայ է կառուցեալ յանուն սուրբ կուսին, բայց ի պատմագիրս Հայոց այրի վանք կոչի, որ անուն յիրափ ըստ իմ կարծեաց իսկապէս նկարագրէ զայժմեան այրիութիւն նորա և ամայի վիճակի:

(Յիշ. պ. Ղօրդանեանի):

ես ուզում եմ այստեղ, այս ձորում մի լաւ քէֆ անենք, ինչ կասէք»։ «ինչ պիտի ասենք պ. Արովեան, հիւանդից էք հարցնում», պատասխանեցին նրա սիրասուն աշակերտները։

Անմիջապէս մօտակայ հովուից մի ոչսար գներով մորթում են և մի լաւ կրակ պատրաստելով, շամփուրները քաշում և չորս կողմը նստում. օրն արդէն մթնել էր. իրենք էլ սովոծ էին քանի որ ժամերով ձի էին խաղացրել։ Պայծառ բնութեան ծոցում, կապոյս երկնակամարի տակ սկսում են իրենց ուրախութիւնները. «տղայք, որ մենք մէկ ոչխար չուտենք, բայ ինչ մարդիկ ենք» Ամբողջ գիշերը կերան խմնցին այդ ամայացրած սակայն կանաչազարդ ձորում։

Լուսադէմին իսկոյն վեր են կենում և անմիջապէս բարձրանում գէպի բլլի գաղաթն որտեղ ընկած են „Տրդատայ թափստակոչուած պատմական հրաշակերտ ամրոցը¹⁾։ Բոլոր շինութիւնները այցելում էին, ամեն մի գեղեցիկ քանդակագործի վրայ ժամերով կանդ էին առնում, և տեսութիւններ տալիս։ Պատմում է ամրոցի անցեալի մասին, նրա նախկին փառաւորութեան և Խոսրովիդումսաի մասին։ Զէ մոռանում այդ տեղի վրայ յօրինուած ողբերը, քերթողների երդածները. (Երեկ Արարանցուն է ակնարկում)։ Կեղեցկադիր սիւների սքանչելլ նկարներով զարդարուած պատուանդանները տեսնելով արտասուքի շիթեր է գլորում իւր այրուած աշքերից. ասկա 4 հատի վրայ նշաններ դնելով յետոյ տանել է տալիս Նրման. (որոնցից երկուսը ըստ վ., Խուդ. գտնուում են նահանդապետի տան սիւների տակ), Աւերակների վրայ իւր շրջադայութիւնը վերջացնելով ծանր տիրութեան մէջ ընկղմուած յի կարողանում զապել. համբուրում է հողը և պատուիրում է աշակերտներին հետևելու

¹⁾ Իբրև տասն ասպարէզ հեռի ի վանիցս (Գեղարդայ)՝ մերձ գեղջն Գառնի ի հարաւակողմն ի ծագ բարձրադիր և լայնանիստ ապառաժի միոյ տեսանեն տակաւին աւերակը ամրոցին և ճարտարաշէն հատուածք սեանց և որմոց ապարանացն՝ մեծազօր արքային Հայոց, Տրդատայ Արշակունուց, զոր շինեաց նա ի բնակարան վայելուչ ամուսնոյ իւրոյ սիրելոյ։ Այս քարինք միայն բաւական են յապացոյց կենդանի նախնի փառաց արքայից Հայոց և ճարտարագործութեան ազգին մեր յայն ժամանակս, զոր տեսանողն՝ ախ—զհուր շնչէ ի խորոց սրտի, աւաղելով զկորուատ փառաց աշխարհանոշակն Հայաստանի։ Սիրալլ է աստի ահագնաձոր տեսիլ որ արշաւն Գառնի գետոյ, կանաչազարդ ձոր նորա և փրփրադէզ աղբիւրք, որը յամենայն կուսէ՝ բորբոքելով, դղրդալով ի ծոց նորա գրկախառնին առ ի բեղմնաւորել, պտղաբերել զինկարեր դաշտս Հայաստանի։

իրեն ու ճանապարհ ընկնում: Բայց միթէ կարող էր այս սքանչելեաց շտեմարանն անմաս և անբաժին մնալ նրա սրտի հեռաւոր անկիններում, ուստի և վեհ զգացմունքն արտայայտեց, իւր գեղեցիկ տողերի մէջ:

«Ի լոին ձոր միայնութեան
Կանդնես դու հին աւուրց արձան,
Գեղեցկարան ճարտար լեզուաւ
Դու զքոյդ ճառես շուք անվախճան...

Այլ ուր այն դար ոսկեկամար,
Հայաստանեայց բոււն զօրութեան
Որ զքեզ կառոյց՝ հրաշտաճար
Խւրում անուան անմահ արձան:

Նա հոգեշունչ լեզուաւ ետ քեզ
Անուն „Այրի“ սիրտ իմ այրի,
Ուր հարսնութեան մանեակ, բեռէզ,
Ուր փեսային թագ, ծիրանի:

Հիմ Հայկազունն աստ անխռով
Դիմէ ուխտել այնպէս ուրախ,
Հիմ նորա տէք յարտասուաց ծով
Ոչ փոխին՝ յայս տեսիլ դառն՝ ախ:

Անդ ի ախուր միայնութեան
Բեկորք՝ չքնաղ ապարանին,
Հիմնատապար, ի շունչ անձայն
Զոգիս քաշին անցաւորին:

Լերինք, աստ վեհն Տրդատ արքայ
Տորածանէր զբաղուկս հզօր,
Այս աւերակք, կայան նորա,
Այսպէս խախտեալ գլուխ ի ձոր... ¹⁾

(Յիշ. պ. Ղօրղան.):

Ազատ ժամանակները Աքովեանը այցելում էր զանազան գլուղեր, մանաւանդ այն տեղերը, որտեղ ուսումնարան կար: Մանօթանում էր հասարակութեան նիստ ու կացի, կենցաղավարութեան և դպրոցական գործի հետ, որն այնքան զբաղեցնում էր իրեն:

¹⁾ Այս յիշատակարանը մի հատ 16 թերթանոց քառածակտեսրակ է, շատ մաքուր արտագրուած և պարունակում է 19 բանաստեղծութիւն, որ շատ ցանկալի էր շուտով հրատարակուած տեսնել: Խորին շնորհակալութիւնս եմ յայտնում պ. Ղօրղաննեանին, որը իմ մեծ ուսուցիչ պ. Ա. Մանդինեանի երաշխաւրական նամակով բարեհանեց տալ ինձ այդ յիշատակարանը:

Աշտարակը, որ Արարատեան գիւղերի թագուհին, էր պատիւ է ունենում իւր մէջ ընդունելու մեծ հիւրին:

«Չեմ յիշում առաջիկայ թէ երրորդ տարու ամառը՝ յանկարծ մեր վարժապետը լեղապատռ. ներս է ընկնում մեր բացդեայ ուսումնարանն և դուռում, ուղղուեցէք, կարգի ընկէք, փայտի նման տեղներդ չուրացէք, վայր թափեցէք. Երևանի թագաւորական վարժարանի մեծն նեկել է, հէնց հիմի հստեղ կը մնի, ձեզ հարցմունքներ կանի, վայ նրան, ով որ մի տառում սխալուել է. ճիպոտի տակին կը մահացնեմ!»

Խեղճ Շապուհը տերսի պէս դողում է, գոյնը դեղին քըրքումի (գաֆրան) է փոխուել, ատամներն իրար են դիպչում:

Մենք խսկոյն թուրքերի նամազի և յայտնի ժամերին անհրաժեշտ եղած լուկէին կոչուած ծորակաւոր խեցի ջրամաններով, որոնցով ջուր էինք խմում, մերձակայ առուից ջուր հասցրինք, սրսկեցինք: Մեզանից ոմանք էլ աւելները վերցրած՝ եկեղեցու բակը բոլորը մաքրեցինք, գրքերս ձեռք առանք և սկսանք ամեն ոք մեր դասերը բարձրածայն կրկնել....

Ահա, հեւալով տուն ընկաւ գգիրն և յայտնեց „աղայի“ գալուստը:

Մի քանի բոպէից «աղան», իւր ետեսից Աշտարակի բոլոր առաջաւորներին քարշ տալով, մտաւ եկեղեցու բակը, գնաց ժամի դուռը համբուրեց և մօտեցաւ մեզ:

Մենք ուսուցչի պատուէրի համաձայն՝ տեղներիցս կանդնեցինք և խոր գլուխ տուինք:

Աղան քարևեց, յետոյ նստեց խալիքայ Շապուհի միակ հասարակ փայտեայ աթոռի վերայ և մատով ինձ իւր մօտ կանչեց ու հարցրեց....:

Աղան քառորդ ժամի չափ մեղ հարցմունքներ արաւ, կարդալ, թարգմանել տուեց, մեր գրաքառ կարծ գրութիւնները տեսաւ և հրամայեց տեղերս նստել: Մի ժամի չափ բոլորին մի առ մի քննեց, ամենքիցս էլ գոհութիւն յայտնեց, վարժապետի էլ ձեռքը բռնեց, շնորհակալութիւն արեցու:

Տւ պատուիրեց ծեծը վերացնել:

«Տեսուչ աղան մի ուրիշ նորութիւն ևս սահմանեց, նա զարմացաւ, երբ մեզանից լսեց, որ զրկուած ենք լողանալուց:

Հիանալի լոյնորդ է եղած աղան, բայց մենք էլ իրանից պակաս չէինք լողանում:

Երեք օր անդադար գալիս էր տեսուչը մեղ այցելութիւն, աքով չը տեսած և ականջով չը լսած նորութիւններն էր մըտցնում խալիքայական մահակի և ուղղու սովոր աշակերտներիս մէջ, նոր նոր խաղեր էր սովորացնում. ինքը խաղում էր մեղ հետ և ստիպում վարժապետին հետևել իւր օրինակին...

Չորրորդ օրն եօթանասուն երեխամք, Շապուհ վարժապետն և գիւղը կէսը ուղուի ուղեկցում էինք Երևանի արքունի դպրոցի մեծապատիւ Տեսչին:

Նա ինքը ցանկացաւ որ իրեն ճանապարհ դնենք երգելով և զուարձանալով:

Նա ձի չը հեծաւ, չուրջ առած դպրոցականներիս՝ մեզ խրախուսելով ոտքով էր գնում:

Դետի կամրջովն անցկացանք, ձուրը դուրս ելանք. եթէ նա մեզ չկանգնացնէր, մենք պատրաստ էինք մեր սիրելի և թանկագին հիւրին ուղեկցել մինչև Նրեան:

Ամենքին մէկ մէկ համբուրելով իւր հրաժեշտը տուեց այսօպերով:

—Նրեխայք, ձեր փարժապետն ինձ խոստացել է այսուհետև ծեծը բոլորովին վերացնել, ամառուայ շոքերին միայն առաւօտեան և երեկոյեան հով ժամանակը պարապել, միւս ժամանակներն ազատ էք, խոստացել է ամեն օր երեկոյեան դէմ ձեզ լողալու տանել, օրական երկու ժամ խաղացնել:

—Բայց երեխայք, եթէ որև է խնդիր ունենաք ինձ դառնալու, իրաւունք եմ տալիս գրաւոր դիմերու. ես Նրեանի թագաւորական ուսումնարանի տեսուչն եմ, ձեր թուղթն ուղղակի ուսումնարան վրեցէք. մի քաշուէք, ես ինքս էլ գիւղացի եմ, Քանագեռ գիւղիցն եմ. իմ անունս է Խաչատուր Աբովեանց:

Աստուած կեանք տայ, շատ չնորհակալ ենք, ձայն ձայնի տուինք մանուկներս:

Նա ձի նստեց և հեռացաւ:

Բլրի ետեն էր անցել Աբովեանցը, իսկ մենք մեր էկեցցեները չէինք դադարեցրելու. (Ցուշիկներ պ. Պոօշ.).

Որքան յիշում եմ Աբովեանցը միջին հասակով, սպիտակողէմ գեղեցիկ մի երիտասարդ էր, նմանում էր իւր Վարդանին, բայց ոչ նրա պէս հաստ և գէր (շատ էլ հաստ չէ). շատ գիւղալարժ և ճարպիկ էր, սրախօս էր և քաղցրաբարոյ:

(պ. Պոօշեանի ինձ ուղղած նամակից):

Սկզբից ի վեր Աբովեանը՝ սէր ունէր երգեր յօրինելու և հաւաքելու. իւր աշակերտներին միշտ կանչում էր իրեն մօտ երգեր ասելու. նա առհասարակ սիրում էր թէ ազգային և թէ ժողովրդական երգեր: Մի անգամ նա առաջարկում է Դենշապուր աշակերտին գալ իւր տուն և երգել, սակայն վերջինս յայտնում է, որ ինքն անկարող է բաւականութիւն պատճառելու չափ երգել, բայց գիտէ մէկ ուրիշը որը կարող է գեղեցիկ երգել (Աբ. Դատեան): Ըստ նրա համաձայնութեան Դենշապուրը պ. Դատեանի հետ գնում է. շատ երգեր ասելուց յետոյ սկսում են խաղալ նոյն իսկ կնոջ ներկայութեամբ, ու ալօյինի խաղալու ժամանակ չեն կարողանում երկու հոգով ծիծաղացնել Աբովեանին, վերջապէս Դատեանը համարձակում է շըրթունքներից բռնել և չարժել, որի վրայ նոյն իսկ կինը խիստ-

ծիծաղում է և այնքան մօտիկ յարաբերութիւնից վշտացած թողնում է դրանց և հետանում:

Այս Դինշապուրը մի անդամ առաջարկում է պ. Դատեանին միասին փարզուրդ մեծ զնալու. Զանազան տեղեր ման գալուց յետոյ զնում են իրենց ուսուցչի մօտ. Արդէն Արովիտա. Նը լոել էր այդ մասին և շատ նեղացած էր. Դինշապուրը վաստակութեամբ մտնում է և սկսում երդել. նա անմիջապէս լուեցնում է և յանդիմանում. «Քեզ ինչ կը սազի, վեր ես կենում դռները ման գալիս, ինչի կարօտութիւն ունիս. Սա ով է քեզ հետ,— Արգարն է», հանում է մի ուուրի վերջինիս տալիս և իրեն պատուիրում անմիջապէս տուն դնալ:

Այդ ժամանակ մի մեծ դէպք պատահեց հայկական աշխարհում: Ներսէս Ա. հաստատուել էր կաթողիկոս և շուտով պիտի Բեսարաբիայից Էջմիածին գնար: Արովիտան նամակ է դրում կաթողիկոսին և խնդրում է Քանաքեռոցի մի կնոջ համար, որ թոյլ արուի նրան պսակուել, քանի որ նրան քրոնի քարչեն ողորմելին յեկեղեցին, նովին բռնահարութեամբ կարդան ի վերայ նորա զկարգ ամուսնութեան: Կոնսիստորիան թոյլ էր տուել պսակուել, սակայն սինոդը երեխ ըստ կաթողիկոսի արամագրութեան վճռեց շտալ իրաւունք¹⁾:

Ներսէս կաթողիկոսին յայտնում է ոչ միայն յիշեալ կնոջ մասին, այլ և իւր մինակի դառնութեան, իւր սիրտ կրծող ցաւերի մասին, ու վերջին յուսահատութեան, ոչ վասն անձին ապրուստի կամ վառաց, զորս ունիմ Տեառն ողորմութեամբ, այլ վասն այնորիկ զի աւուրզ իմ անցանեն ընդ վայր, զօրութիւն իմ սպառի օր ըստ օրէ, միտք իմ գլանայ, ցանկութիւնք իմ մեռանին, տեսանեմ զտարարակատ վիճակ հայրենեաց և չունիմ հնար և միջոց օգնել նմա իւկիք, որ էր առաջին և վերջին նպատակ կենաց իմոց: Փորձ Ն Ը.

Այս խօսքերով նախապատրաստում է իւր ամուսնաթողութեան խնդիրը և կարճ ժամանակից յետոյ ոգերդաստանի և զաւակների աէլ Արով. յանկարձ 1845 թ. վետրուարի 15-ին Երևանից դիմում է Ներսէս կաթողիկոսին և ցանկութիւն յայտնում հրաժարուել աշխարհից և կուսակլոն դառնալ „Յոյս հոգեոր հիմնաւոր կրթութեան ամենայն ազդի, նա մանաւանդ մեր, ի հոգեորականաց միայն յառաջ գայ, բայց գոյ ի մէջ ըո-

¹⁾Պ. Երիցեանը կարծում է որ Արով. է եղել պատճառ կնոջ բաժանուելուն. մենք դժուարանում ենք հաւատալու ի նկատի ունենալով նրա անմեղ հոգին, ալարզ սիրտը և աւետարանի կատարեալ աշակերտ լինելը: Արով. մասին այս տեսակ կարծիք տանելը առ նուազն չափազանցութիւն է. ճիշտ է, Երևանի հասարակութեան մէջ կան նոյնատեսակ կարծիքներ, սակայն այդ պիտի բացարել նրա անօրինակ անկեղծութեամբ:

լոր հոգևորականաց մերոց և անձն մի որ խսկապէս ծաճիցէ և կը ունեցէ զմեծախորհութիւն դիտաւորութիւն և զբարեփոյթ քաջանութիւն Զերդ վեհափառութեան... Մտեալ յամուսնութիւն վաղուց հրաժարեալ եմ զայնմանէ, ոչ վասն այնորիկ զի ոչ սիրեմ զընսանիս և զզաւակունս, քաւ լիցի: Կին իմ գերնանացի դոլով՝ կարէ լինի զարդ ամենայն տան իւրով բարերարոյութեամբ և պարկեշտութեամբ, այլ այս անրուժելի ցաւ սրտիս, որ և պատճառ լիցի մահուան իմում, խափանեալ և խանդարեալ ունի զամենայն դօրութիւն իմ, այսարհ ամենայն մնուեալ է յաչս իմ: Զեր իմ այլ կեանք, քան բարեբախտութիւն հայրենեաց: Պահանջեսցէ ոք զկեանս իմ ի պատարագ նմա՝ պատրաստ եմ և զայն ընծայել ի զոհ: Արարէք զիս շիւղ ոտից Զերոց, վսեմափառադոյն եպիսկոպոսապետ: Եթէ օրէնք ի ձեռս առաջնորդաց են, քանի ևս ի ձեռս եպիսկոպոսապետաց և առաջնորդապետաց: Չեմ ես առաջին օրինակ միայն՝ որ ցանկայ թողով գտուն և զաւակունս և բառ. նաև զիսաչն Քրիստոսի. կամիմ, պատրաստ եմ հոգւով և մարմնով ի խաչ ելանել ի սիրոյ առ հայրենիս. Չեն այս ցնորք տղայական, այլ հաստատ յօժարութիւն և փափաք առն կատարելոյ: Մինն ի բազմարդիւն աշխարագորով վսեմագործութեան Զերոյ ելլցի՝ դարձուցանել զիս յառաջին վիճակ իմ, որում միայն յուսամ կատարելագործել զամենայն փափաք սըրտիս: Աջ սըրբազնասուրը Տեառնդ զառաջինս կնքեսցէ զթոռն Արովի լինել Զեզ զաւակ արժանաժառանդ և պիտանի որդի հայրենեաց: Դուցէ այսմ իմում օրինակի հետևեսցին և բազումք յաշակերտաց իսոց, յորոց սիրտ փափուկ վաղուց վառեալ բորբոքեալ է իմ զնախանձ հայրենասիրութեանս^ս:

Այս խնդիրը մնաց անկատար և թոյլ չտրուեց նրան ամուսնուց բաժաննուելու:

Ներսէս ժողովրդի սրտագին կեցցէներով առաջնորդուած գարնան եկաւ դէափ էջմիածին. Ներանում մեծ և փառաւոր ընդունելութիւն ցոյց տուին. Արովեան իւր աշակերտներով ընդ առաջ գնալուց զատ, գնում է սուրբ Սարգիս՝ կաթողիկոսի վեհարանը, որտեղ իւր աշակերտներից երկուոր Դենշապուր և Ղօրդանեան ճառեր են կարդում. առաջինը հայերէն (ոտանաւոր) երկրորդը ոռուսերէն (կերջին դեռ մնում է):

Ներսէսը շատ հաւանում է տեսնելով նրանց ջանասիրութիւնը, նրանց գովելի յառաջադիմութիւնը խրախուսում է նըրանց և խոստանում է աշակերտներից մի խումբ ուղարկել նւրողա բարձրագոյն կրթութիւն ստանալու հաֆար:

Նըրովեանի ուրախութեան չափ չկար, նա ամելի ոյժ է ստանում իւր բարոյական զաւակների յառաջադիմութեան գործըն աւելի և աւելի յառաջ տանում և այնպիսի հսկայական քայլեր է անել տալիս, որ կարող էին ուղղակի մտնել բարձրագոյն դպրոց: Գերմաներէն ոչ միայն ուղիղ կարդում և դըրում

էին, այլ ազատ խօսում և հասկանում էին.

Ներսէսի օծուելուց մի քանի ամիս յետոյ Աբովեան դիմում է վեհափառին և յայտնում աշակերտների յառաջադիմութեան մասին և խնդրում է ժամանակ նշանակել: Աղքասէր հայրապետն օրհնում է Աբովեանի ջանքը և եռանդը և խոստանում է մի քանի գործերը վերջացնելուց յետոյ ժամանակ նշանակել:

Աւելի ևս ոյժ ստացաւ ազգի վերածնութեան գործի մեծ հերոսը—դարձաւ և աւելի ջերմ կերպար շարունակեց իւր ուսումը: Շատ ամիսներ են անցնում, սակայն նա կրկին սպասողական դրութեան մէջ հայրապետի կարգադրութեան էլ ակն յառել Տեսնելով աղաների անորոշ վիճակը կրկին դնում է ս. Էջմիածին և դիմում վեհ: Կաթողիկոսին և խնդրում է ժամանակ որոշել: Կաթողիկոսը զբաղուած լինելով վիճակների առաջնորդների գործերով—միւս կողմից ինքն էլ մի քիչ անհոգ լինելով ասում է: «օրհնուած, ինչ անհանգիստ մարդ ես, քեզ մի բան ասացին այլ ևս ձեռք չես վերցնելու»:

Այս խօսքերը բոլորովին ջարդեցին հայ ևաղնիւ տղամարդու յօյսերը, նպաստակները և նա տիսուր-արտում վերադարձաւ Երևան: Աղքասէրական բուռն եռանդը, սէրը և այն լարուած դրութիւնը ինչո՞ւ պիտի հանդստանար եթէ ոչ արտասուլքների հեղեղներով¹⁾ (Կոռունկ):

Սպասողական դրութեան մէջ և ապագայի ցնորքներով ողերուած աշակերտները հարցնում են «Պ. Աբովեան ինչ լուր, ինչ համբաւ, սակայն ոչինչ պատասխան—բայց թէ տըխուր գէմք, մուայլ երես, աղիողորմ հեծլաւանք, մազեր պոկել»:

Սուդ և տիսուրթիւն է տիրում ուսուցչի և աշակերտների մէջ: Սակայն երկար չէ տևում: Հերոսի յատուկ եռանդով սկսում է իւր գործը միայն տարբեր ուղղութեամբ: Գերմանական ուղղութիւնն այլ ևս ձեռք չտուաւ, սկսեց ուուսերէնին հետևել սայսուհեաւ ուուսերէն, տղաք, դուք ինքներդ պիտի բանաք ձեղ համար ճանապարհ»:

Կեանքի զանազան հանդամանքները, անլուր բամբասանքները, յուսահատութիւնը ահուելի խոշնուտներ են առաջնում, կրօնաւորութեան խնդիրն աւելի ևս ձգում է Աբովեանին անհուն տիրութեան մէջ: Մոայլ աշխարհայեացքներով էր այժմ զեկավարում, ուստի և կորցնում է նախկին զուարթ բնաւորութիւնը:

Չնայած ուսումնարանական հոգաբարձուի յանդիմանութեան և տարօրինակ նամակներին—կառավարութիւնը գնահատում է Աբովեանին և 46 թ. գեկտ. 5-ին կօվէժակի ասսեսորութեան աստիճան է տրւում²⁾:

¹⁾ Տեսչական և ուսուցչական (աշխարհդ. թուարան.) պաշտօնի համար ստանում էր 380 լ.:

Այն խիստ տիրութիւնը, որ կեանքի վերջին տարիներում երևաց, ստիպում էր երեմն փողոցներում ոստիկանի պաշտօն կատարել, նոյն իսկ ամենապիոքը անկարգութիւն տեսնելուց: Մկնարկած նիւթաբանական երից քաշում, հանում էր երեխաներին և բերում ուսումնարան: Հրապարակում բարձր ձայնով յանդիմանում էր այդպիսի տղաների ծնողներին. «Ինչու ձեր որդկերանց ինձ մօտ չէք ուղարկում, այլ միկնարանինան էք ուղարկում: Ես խ ձեզնից փող չեմ ուզում»:

Փողոցով անցնելիս տեսնում է, որ Աֆրիկան (Առ. Աֆ. Հայրը) իրանից մի քիչ առաջ անցնող մի պաշտօնէի առաջ վերկացաւ և խորը կերպով գլուխ տուեց, իսկ յետոյ ինքն անցկացաւ և ուշադրութիւն շտարձրեց. Արով. վիրաւորուած հասնում է և մի քանի անդամ գլխին զարկում է սակերպ—մի հասարակ պաշտօնէի առաջ ծունը ես գնում, իսկ ես որ ձեր երեխաների ուսուցիչն եմ, ինձ ուշադրութիւն չեղարձնում, Ա. Դ.

Արովիւանն իւր թուրք աշակերտ Շափի բէկի և առհասարակ շատերի տունը միշտ յաճախում էր: Սյո մօտիկ յարաբերութեան մասին քաղաքում վաղուց սկսել էին խօսել և զանազան բացատրութիւններ տալ, սակայն «ազնիւ տղամարդոն» արհամարհում էր այդ տեսակ բասէկոսէնները և իւր մտերմութիւնը պահպանում թէ հայ և թէ թուրք ընտանիքների հետ:

Զրապարտութիւնների և անհեթեթ խօսակցութիւնների տուար չի կտրում, այլ ընդհական ակն երկարում են և մինչեւ անդամ չափազանցութեան հասնում, որտեղ և ստանում է իւր փառաւոր պատկն, այս է 1848 թ. սկզբին նա արձակուած էր Ներեանի գաւառական վարժարանի տեսչութիւնից և իւր համար մասնաւոր վարժարան ունէր բացած:

Կաթողիկոսը լսելով այս մասին և շատ բարձր գնահատելով նրա ուսումնական արժանաւորութիւնն, անմիջապէս հրավիրում է Թիֆլիզ Ներսիսեան դպրոցի տեսչութեան համար: Արովիւանը շատ ուղախանում է, որ այնուհետև պիտի ծառայէ հայոց դպրոցում».

Սակայն դեռ չտեսած իւր իղձերի և փափազների իրագործումը, իւր ուսանողական ժամանակուայ դիտաւորութիւնների կատարումն, յանկարծ 1848 թ. յունիսի 12-ի գիշերը անյայտանում է (ըստ Վ. Արով):

Նոյն թուականին նահանգգապետը (այսաեղ ապրիլ է նըշանակուած) պաշտօնապէս հաղորդեց փոխարքայ իշխ. Վ.օրօնցովին թէ Ներեանի գաւառական ուսումնարանի տեսչութեան պաշտօնէից արձակուած կօլլէժուկի ասսէսօր Արովիւանը ապրիլ 2-ի լուսադէմին յայտնի չէ թէ ուր է գնացել և կորել անհետ: Նորա ընտանեաց տուած բացատրութեամբ, անհետանալուց երեք օր առաջ նա տիրութեան մէջ էր ընկել, ոչինչ չէր ուտում, սակաւ էր խօսում, հանդերձը չէր հանում և ասես թէ անքնութիւնից տանջլում էր: (ՁԵՒՑ.)

Տիկին Արովեանն առաւօտեան յայտնում է ոստիկանատան, հեռազրում են զանազան կողմեր, բայց ոչ մի պատասխան չի ստացւում, անհետ կորչում է մեծ մարդը ողբոշմելով իւր դարը և ազգը:

ԺԴ.

Արովեանի ողբերգական մահը:

Մինչև այժմ անմահ բանասաեղծի մահուան մասին որոշեղբակացութիւն անող չի եղել, քանի որ այնպիսի մի ժամակում է կատարուել նրա վախճանը, որ անկարելի էր հետամուտ լինել և ջոտապէս խմանալ այդպիսի մի անձնաւորութեան անյայտանալու պատճառը: Ուստի և առաջացել են զանազան ենթադրութիւններ:

Արովեանի անյայտանալու մասին զանազան ենթադրութիւններ կան, ոմանք քաղաքական միտումների են վերագրում, այլք թուրքերի վրիժառութեան հետևանք են ասում, իբրև թէ պարսիկ խանների կանանց հետ ունեցած յարաբերութեան համար, նրանցից խեղուուել և անյայտացել է.... Ասում են որ գլխարկը, կօշկի մի հատը, սերթուկը գտել են Զանգուի ափին. բայց այս ամենը բերանացի տարածուած լուրեր են, հաստատոյինչ չկայ. ոմանք էլ իբրև կնոջից լսած, ասում են թէ նա կորչելու նախընթաց երեկոյին շատ մտախոհ է եղել, ոչ ոքի հետ չի խօսացել, վաղ երեկոյից մինչև ուշ գիշերը ժամի մինչև չորսը շարունակ գրել է, առանց ուշադրութեան առնելու կնոջ խնդրուածները վեր կենալ և պարկել:

Առաւօտադէմ իբրև թէ կնոջ քունը տանում է, մէկ էլ աշքերը բաց է անում և գտնում է ամուսինը կորած, (պ. Պ. Պո. Ն. նամակից):

„Ոմանք ասում էին՝ թուրքերն են սպանել, թաղել և հետքը կորցնելու մտքով արտաքին նշանները գետի ափն են ձգել իբր թէ՝ ինքնակամ գետն է ընկել խեղդուել:

Այլք ուրիշ հաւանական և անհաւանական ենթադրութիւններ էին անում.... ովք գիտէ, ժամանակից առաջ ծնած մարդ էր, ամեն բան կարելի էր գուշակել, բայց հաստատ ոչինչ չիմացուեց:

Հաստատ էր միայն, որ Զանգուն աղեցին, մաղեցին ամեն տեղ որոնեցին և դիակը չը գտան, չը գտան ու չը գտան:

(Ցուշիկ. պ. Պո. Ն.)

թէ յիրաւի այս ենթադրութիւններից մի քանիսը բոլորովին ճիշդ են, այդ կը տեսնենք յետոյ իմ հաւաքած տեղեկութիւններից:

Յիշատակելով բոլոր թէ դրաւոր և թէ բերանացի լուրերը անցնենք իմ հաւաքած տեղեկութիւններին.

Աբովեանի անյայտանալուց մի քանի օր յետոյ նրա ծանօթ Վեքիլովը դալիս է տիկին Աբովեանի մօտ և սկսում է հարց ու փորձ անել ամուսնու մասին, որ իրքն թէ ինքը ոչնչից ոչինչ տեղեկութիւն չունի, գիւղումն է եղել եւ ուզում է իմանալ նրանից: Տիկինը պատմում է եղելութիւնը. ինքնակոչ պարոնն անմիջապէս իւր ցաւն է յայտնում և ապա առաջարկում է իւր պատրաստուկանութիւնը, ծառայելու և իւր բարեկամի ամուսնու նեղութիւններին մասնակից լինելու: Վեքիլովը, որ վաղուց էր աչք դրել իւր բարեկամի ունեցածի, մանաւանդ նրա գեղեցիկ տան տեղի վրայ (ուր այժմ Նրեանի քաղաքային ժողովարանն է) արդէն վերջապէս կարող էր հասնել իւր նպատակին. չկար նրա զօրեղ բարեկամը, և ինչ կարող էր անել մի միամիտ գերմանուհի... Շատ անգամ գնում է նա ամուսնու մօտ, ձևացնում է ամենամօտիկ բարեկամ, որ վերջ ի վերջոյ յաջողում է ինքնակոչ խնամակալի (օպերու) տենչալի տիտղոսին հասնել:

Տիկինն Աբովեանը բոլորովին իւր յոյսը չէր կտրում մարդուց. նա հաւատացած էր որ շատ շուտով կերևայ իւր ամուսինը, ուստի աշխատում էր Վեքիլովի իրաւունքներին լիազօրութիւն չտալ, միւս կողմից իրքն թոյլ կին երբեմն զիջանում էր նրա քաղաքավարի ձևերին և կարծեցեալ բարեկամութեան,

Տիկինն իրաւացի պատճառով իւր յոյսը չէր կտրում, քանի որ Աբովեանը սովորութիւն ունէր առանց տանը յայտնելու կամ միւստացնելու զանազան կողմեր գնալ և այնտեղից նամակ գրել թէ այս ինչ տեղն եմ միամիտ կացէք:

Շատ անգամ գերմանուհին մարգարէաբար գուշակել էր թէ ես իմ մարդուն պիտի կորցնեմ, քանի որ նա հազուագիւտ յատկութիւններով է օժտուած: Ուստի թէն երբեմն երբեմն յոյս էր յայտնում, որ անպատճառ կերևայ—սակայն աւելի շատ համոզուած էր, որ այս անգամ անդարձ կորաւ:

Վեքիլովը, որ վաղուց տենչում էր իւր պաշտօնին, կնոջ սիրու հանգստացնելու համար իրքն ապացոյց, որ յիրաւի Աբով. կորել է, բերում է մի կօշիկ և մի սերտիւկ, յայտնելով թէ Զանդուի ափին են գտնուել. Ուզում էր դրանով հաւատացնել տիկնոջ որ Աբովեանը մեռել է: Վերջինս չէր յիշում չորը և կօշիկը և չէր կարողանում ճանաչել արդեօք իւր մարդունն են թէ ոչ: Կանչում էր աշակերտներին, գերձակին և կօշկակարին —մի գուցէ նրանք ճանաչեն. աշակերտները հերքում են, որ

իրենց ուսուցչինը չեն. իսկ կօշկակարը պատասխանում է «թէ ես միայն մի կաղապար ունիմ կօշկի. ով ուզում է նոյն կաղապարովն եմ կարում. այնպէս որ չեմ կարող որոշ ասել թէ ումն է: Նոյնպիսի պատասխան է տալիս և դերձակը»:

Այսպիսով Վեքիլովի առաջի փորձն անյաջող անցաւ կնոջ հաւատացնելու համար Աբովեանի խեղոտուելը. ուստի և որքան աշխատեց սև հաղցնել չաղաք, առարկելով որ ոչինչ փաստ չկայ որ ես համոզուիմ:

Սրանով չինատուեց հնարագէտ թուրքը, երկրորդ փորձին դիմեց. այս անգամ ոսկրներից բռնեց: Մի օր մի քանի ոսկրը և մի գանգ բերելով, ասում է—այս նրա ոսկուներն են և գանգը, այժմ կարող ես սև հագնել: Սակայն տիկինը կրկին չի ուզում հաւատ ընծայել, միայն վերցնում է ոսկրները և տանում բժշկին ցոյց տալիս. որը զննելուց յետոյ այն եղակացութեան է գալիս, որ 16 ատրեկան աղջկայ գանգ է մի քանի տարի ջրի մէջ մնացած: Այսպէս թէ այնպէս Վեքիլովը շարունակում է լինել խնամակալ և փշացնել նրա ունեցած չունեցածը և Աստուած դիտէ թէ ինչ էր անում»:¹⁾

Վեքիլովի բռնած դիրքը թէ մինչև այժմ և թէ յետոյ ինչ ալէս կը տեսնենք ցոյց է տալիս, որ նա դիտէր Աբովեանի մասին, սակայն չէր կարողանում որոշ յայտնել:

Աբովեանն ունէր մի քանի թուրք աշակերտներ, որոնցից մէկը Շաֆի բէկը²⁾ շատ դիւր էր եկել նրան. ուստի և ամենայն աեսակ խնամք պակաս չէր անում նրանից: Սրա հայրը պարտքերի տակ է ընկնում և փախչում Պարսկաստան, թողնելով կնոջը և որդուն նրանում: Պարտատէրերն այդին պիտի ծախել տային իրանց փողը վերցնելու համար: Շաֆի բէկի մայրը իմանալով որդու և Աբովեանի մօտիկ յարաբերութիւնը

¹⁾ Այս բոլոր տեղեկութիւնները ես հաւաքել եմ տիկին Զարմանդուխտ Բաժեսկուց՝ Աբովեանի հարազատ աղջկանից ներկայութեամբ մեծ. տիկին Աշխէն Տէր-Սարգսեանի: Պ. պ. Վ. Խուդաբաշեան, Յովհ. Զալալեան և Աբ. Դատեանը նոյնպէս պատմել են ինձ շատ դէպեկել:

²⁾ Շաֆի բէկի նախնիքը Նախիջևանի գաւառի Շաթլու թրքաբնակ աւազակարարոյ դիւղիցն են: (Յ. Զ.).

և մտերմութիւնը՝ դիմում է նրան և խնդրում օգնութիւն։ Դէպի Շաղի բէկն ունեցած յարգանքը ստիպում է սիրող ուսուցչին անմիջապէս օգնութեան ձեռք կարկառել և 700 ը. փող տալով նրան ասում է «տար պարտքերդ տուր և այդիդ աղատիր, յետոյ կաշխատես քիչքիչ կը տաս, կամ ինչպէս կուղեա»։

Այս դէպքից յետոյ Արովեանը կասլում է այդ հրաշալի այգու հետ, որ գտնուում է Նրեանի արևելեան կողմում Դամուրուկաղ կոչուած տեղում և շատ անգամ զնում է այդ այդին զբօսնելու Թուրք խանումը իւր անկեղծ չնորհակալութիւնները միշտ յայտնում էր Արովեանին և նրա ամուսնուն զանազան նուէրներով։ Այդպիսի յարաբերութիւնը հետզհետէ տաքացնում է տաքարիւն բանասեղծին էլ աւելի յաճախ կատարել իւր զբօսանքը այն այգում, որտեղ ամեն ոք կարող էր զուարճանալ չնչելով տեղույն պարզ օդը և դիտելով գեղեցիկ տեսարանները, որոնք ձգւում են դէպի հիւսիս և հարաւ։

Ժամանակակիցները սկսում են նրա վերայ կասկածել և զանազան թեր ու դէմ ենթադրութիւններ անել...

Սակայն որքան լսում էր, այնքան աւելի էր բարկանում և աւելի էր գնում, շատ անդամ իւր աշակերտների հետ միասին, որտեղ թէյ էին խմում և կանաչ խոտի վրայ արևելեան վիլաւը վայելում։

Կասկածները հետզհետէ աւելի խիստ կերպարանք են ստանում. այս մասին լսերով տիկին Եմիլիայն մի քանի անգամ նկատում է ամուսնուն „քեզ ինչ կը պատկանի այդքան շուտ շուտ գնում ես մի թուրքի բաղ, գնա հայի բաղ, ո՞րտեղ գնաս որքեղ արգելեն“։ Առանց ուշադրութիւն դարձնելու կնոջ նկատողութիւնների վերայ շարունակում էր նա իւր զբօսանքն հէնց նոյն այդում։

Խօսակցութիւններն այնպիսի ծայրայեղութեան են հասնում, որ մի դիրք ունեցող մոլլայ նախագուշակելով վտանգաւոր ապարան, գնում է Արովեանի կնքահայր գնդապետ Լիւդմինօվի մօտ և յայտնում այն բոլոր դաւադրութիւնները, որ մի քանի թուրքերի մէջ պատրաստում է։

Գնդապետն անմիջապէս գնում է տիկին Արովեանի մօտ և ասում. „Ես չեմ ուզում Խաչատուրին նկատողութիւն անել, տաք բնաւորութիւն, ունի, կը վիրաւորուի, ասա որ ինձ մօտ մի մօլլայ նկատ և յայտնեց ժողովրդի տրտունջների և դաւադրութեան մասին, խորհուրդ տուր, որ այլ ևս չգնայ այն այդին“, Տիկինը ասում է որ „շատ անգամ եմ խնդրել, ճար չի լինում“։ Փորձիր վերջին անգամ՝ աւելացնում է գնդապետը։

Արովեանը կնոջ խօսքերը լսելուց յետոյ աւելի ևս նեղանում է և ասում. „մինչև այժմ օրական մի անգամ եմ գնացել առաւոտեան, այսունետև Յ անգամ պիտի գնամ, խալիսին ցոյց

տալու համար որ սիրտս բարի է, թող ինչ ուզում են անեն,
վախեցող չեմ...”

Այս խօսակցութիւնից մի քանի օր յետոյ մի գիշեր լուսադէմն իւր առանձնասենեակից դուրս է գալիս և գնում նընջարանը, որտեղ պարկած է լինում իւր փոքրիկ դուստր Զարմանդուխտը և համբուրում. ապա կրկնն մտնում առանձնասենեակ: Այս տարօրինակ չէր տիկնոջ համար, ուստի և ոչինչ չէ խօսում, քանի որ մի քանի անդամ արդէն նկատողութիւն արել էր, որ թողնէ այս սովորութիւնը և քնած ժամանակ անհանդիստ չանէ երեխաներին: Սակայն նա ուշադրութիւն չէր դարձնում:

Տիկինը կարծում է, թէ նա իւր սենեակում շարունակում է պարապել, քանի որ միշտ մինչև լոյս աշխատում էր:

Առաւօտեան վեր են կենում, թէյ պառարաստում, յետոյ տեսնում որ չկայ Արովեանը: Կինը ծառային հարցնում է. արդէօք ինչ եղաւ ամուսինս: Ներ դուրս եղաւ. պատասխանում է. զլուսադէմին մէկը դուռը բաց արեց, միայն չիմացայ ո՞վ էր:

Ըստ կնոջ ասութեան, Արովեանն ուղղակի գնում է Շաֆի բէկի այգին (Շաֆի բէկը 92 թ. խօյերայով վախճանուել է): Հայրը վաղուց Պարսկաստանից վերադարձել էր և մտածում էր Արովեանի պարտքը մի կերպով վերջացնել, աւելի յարմար է համարում մի քանի հոգով բռնել Արովեանին և սպանել, որ և անում է: Սպանութիւնը կատարւում է կացնով, և ապա ամփոփում են ինկելի մարմինը այգու խորքի հին փլատակների տակ:

Թէ յիրաւի նրա սիրելի աշակերտը մասնակից է եղել սպանութեան, յայտնի չէ. ոմանք ասում են որ առաջի հարուած տուղը նա է եղել. իսկ ոմանք պատմում են թէ հայրը որդուց ծածուկ է կատարել այդ եղեռնադործութիւնը: Թէ զանազան կարծիքներ կան և այլանդակ ենթադրութիւներ, ես ընդունում եմ միայն այս, որ նրա համար գերեզման փորողը եղաւ իւր բարեգործութիւնը—700 ըուբլին:

Այս լուրը կայծակի արագսւթեամբ տարածւում է ամեն կողմ. սիրելի աշակերտները չկարողանալով դիմանալ և լսոծ լինեազ որ Շաֆի բէկի այգումն է սպանուել, խմբով գնում են մի անդամ մտիկ տալու այն հողին, որտեղ իրենց պաշտեիլ մարդու նշխարքն է ամփոփում: Դեռ շմօտեցած այգուն, խեղներն սկսում են դողալ, ուսուցչի ուրուականն երեսում է մեր աշքին: Դողիդող այգու այս և այն կողմից սկսում են մտիկ տալ հին-հին փլատակներին: Մի քանի թուրք երիտասարդներ տեսնելով Արովեանի աշակերտներին ասում են. «Ճեր ուսուցչին էք ման գալիս, այ այնտեղ ցոյց տալով Շաֆի բէկի այգու փլատակներից մէկը, Դրանցից մէծն անմիջապէս ընկերներին արգելում է շարունակել խօսակցութիւնը: Աչքս

ձգեցի այն փլատակի վերայ, որտեղ ցոյց տուաւ թուրքը, ջանս սարսուռ ընկաւ, ուստի թողեցի և մինչև տուն վազեցինք» (Վ. Խ.)¹⁾

Այս մասին մինչև այսօր վկայում են թուրք ծերերից մի քանիսը, որոնք ծանօթ են թէ Արովեանին և թէ ժամանակի հանդամանքներին: (Յ. Զ.)

Տիկին Արովեանը մի քանի օրերից յետոյ բոլորովին համոզում է վերոյիշեալ դաւադրութեան մէջ, ուստի և թէ ուշ խնդրում է ոստիկանապետին խուզարկել կասկածաւոր այգին: Մի քանի անգամ այս խնդիրը կրկնում է անհետեանք:

Թուրքերն այս մասին լսերով, հանում են դիակը և ձգում Զանգուն:

„Սէթիլ տղայ Մարտիրոսը ձուկ որսալու ժամանակ յանկարծ սևաքարերի մէջ մի դիակ է գտնում, շապիկը գլխին քաշած, մարմինը բոլորովին այլանդակուած, այնպէս որ չի կարողանում մարմնից ճանաչել թէ ոչ է. միայն սրոպական ձեի շապիկը և կոճակները կարծել է տալիս, որ նորերում անյատացած Արովեանի դիակն է: Խեղճ ձկնորսը վախենալով թէ մի գուցէ դիակի տեղը յայտնելուց ինքն ընկնի որոգայթի մէջ, քարերի արանքից հանում է և գցում ջրի զօրեղ հոսանքի մէջ»: (Ար. Դատ.)

Շատերը կարծում են որ դիակը այգուց բոլորովին դուրս չեն բերել, քանի որ հաւատացած էին որ ոչ ոք չպատի խուզարկէ..., բայց ես հաւատական և ճիշտ եմ կարծում Մարտիրոսի պատմածը, որը երկիւղով իր կեանքի միայն վերջին օրերումն է պատմել:

Թէ յիրակի այնտեղ է սպանուել՝ կրկին մի քանի փաստեր բերենք:

Տիկին Զարմանդուխտը պատմում է, որ մի անգամ մայրը ներկայ է լինում Շաֆի բէկի և Վեքիլովի մէջ տեղի ունեցած վիճաբանութեան, որտեղ առաջինը երկրորդին «մօշենիք», է ասում, իսկ երկորդը պատասխանում է «Պօսմորմէ ետօ այն հայտ մօշենիք»: Այս խօսքերի վրայ յանկարծ յիշում են տիկին Արովեանի ներկայութիւնն և գունատուած՝ խօսքը ուրիշ բանի վրայ են փոխում:

Մի անգամ էլ Արովեանի վեռայի մօտ (Վաղարշապատի հաշտարար միջնորդ) զալիս է Շաֆի բէկը: Խօսք է ընկնում Արովեանի ունեցածի մասին: Այդ բոպէին մտնում է տիկին

1) Ես անձամբ պ. Յ. Հետ գնացի տեսնելու վերոյիշեալ այգին: Հորս կողմը բարձր պարսպով պատած էր, չկարողացանք մտնել, միայն բարձրացայ փողոցի մի ծառի վրայ և դիտեցի եղեռնագործութեան դաժան վայրը:

Զարմանդուխտը և լսելով հօր անունը ասում է «Շափի բէկ, մեր տունը քանդեցիր... Աստուած չի վերցնելու», նա՝ կէս ժամ լեզուն կապւում, չի կարողանում խօսել:

Արովիանի ողբերգական մահուսնից անցնում է մի քանի տարիներ, իւր դուստը օր. Զարմանդուխտոն աւարտած թիֆլում Մադամ Ֆառուրի երեքդասեան դպրոցը դաշն է Նրանան. և գեռ հօր անյայտանալու մասին ոչնինչ չէր իմանում. ոչ ոքից չէր լսել Շափի բէկի այդում սպանուելու մասին. Նոր եկած օրիորդը, ցանկանում է այցելութիւններ անել, մի ուրիշ օրիորդի հետ գնում են մի ընկերուհու տուն, որը գտնւում է այն փողոցի վրայ, որտեղ է և Շափի բէկի այդին: Հաղիւ էր մի քանի քայլ արել, յանկարծ թուլութիւն է զգում օր. Զարմանդուխտը, սիրութ նուազում է և այլ ես չի կարողանում առաջ գնալ: Բոլորովին ուժասպառ յետ է դառնում տուն և պատմում մօրն այս դէպքի մասին: Մայրն անմիջապէս արտասում է ասելով աղջիկս դու բարի ես, սիրտդ իմացել է որ քո հայ ըիլկդ սպանուած է այն այգում, որի մօտով պիտի անցնէ այդ փողոցը⁶:

Թէև շատերին առասպել կը թուայ այս, սակայն ես դնում եմ վիայութիւնների շարքում

Այսպիսով 48 թ. գառնում է մի ահարկու թուական հայոց կենաքի հորիզոնի համար:

50 թ. վախճանում է կինը սըտի բարախումից, որը ստացել էր մարդու սպանութիւնից յետոյ, սորովհետեւ մինչև վերջին ըրպէն նա կարծում էր որ պիտի ամուահնը գայ և ամեն մի թրիկոց լսելուց՝ աղջկան ասում է. „տես, հայրդ չի եկել“:

Առ Խաչուտուր դպիրն Արքիվանց ի Դերաստ
Տիխիսի ի 25 յուն. 1832 ամի

Ողջոյն քեզ, սիրասուն եղբայր: Նոր օր, նոր յունուար. Նոր արդեօք և որ յիսն կըից գրականալ, քաւ յինէն, նոյն որ հնանայն և նոյն որ նորոգի, նորոգի—հնանալով և հնանայ նորոգելով, զսէրն իմա՝ զսիրողիդ և զսիրելուդ, որոյ կայծ հոգիս ցոլանայ, ցոլանայ՝ և զի ի ներդոյս զիմ հոդեհէ,

Գիտեմ, զի յամսեանն եթերանեմ Արեգին վերստին մտանէ ի նախկին կենդանատեսակն ի Խոյ, լսկ պանդխտելոյդ երբ յիւր հայրենին դարձ՝ անդիտանամ ամենին: Այս բանք եմ առ ի ցուցանել, եթէ զմիակ անձկալիդ հոգւոյս ի մոռացունս ունել երբէք չհաճիմ, թէ և չմարթացայց զոր ինչ սուրբ սիրոյն են օրէնք՝ բովանդակ լնուլ:

Յանցանք է այս յերկարելս իմ ցայս վայր և զմիջոց գրածոյիցս. այլ մեծայոս եմ, թէ եղբայրութեանդ որ առ իս՝ անարատ սէր, ինքնին ծածկեսցէ զամենայն ըստ դիպաց առթեալ պակասութիւնս:

Աղաչեմ զքեզ եղբայր իմ՝ աղաչեմ, մատադիր լեր, սրտա-
դիւր, ինդութեամբ ճնենեաց. ծիրածիր ընթա յասպարիսիդ
հայրենասիրութեան, որում լրիւ չափ զկեանքդ ողջակիզես: Իմ
իսկ փորձ առեալ է բազում անգամ, զի միայնութիւն յօտա-
րութեան՝ մըրկէ երրեմն ի մարդում զնեղութութիւն, այլ դու
զուարթ կաց Խաչատուր իմ, չեմ ես ի քէն ի բաց-յոր վայր
իցես՝ մերձ հմ, ի մօտի կամ և հոգւով և մտօք, թէն Կովկա-
սեան բարձունք ընդ մէջ կայցեն: Քան ինձ Հայաստան՝ քեզ
Դերպատ հայրենիք համարեսցի այսօր: Արարատայն յայսմ հետէ
կորեաւ վայելչութիւն, երր իշխանականն դաւազան տուաւ ի
ձեռու Փերմոնւոյն, մելին ասացցից. Կարբեցի եպիսկոպոսն կա-
թողիկոսացեալ առ կենդանութեամբ դառամելոյն Եփրեմայ ի
8 Նոյեմբերի անցեալ ամի, գահակալէ այժմ ի Գըրիդորեան
Հայրապետանոցին, թոռն Մարտուգէի ճոխանեմ սիդայ. նորա-
տունկ Գէորգէուք նազաքայլ ընթանան, կեսարացին Բարսեղ
սասակահրաման յուսորտայ. Ջլուրակելքն Եջմիածնի՝ որոց ստուե-
րամած են մտաց անկողինք, զորս միանգամ արտաքոյ իւրեանց
տեսանեն մոլորահետ զնացից՝ լուսերազանդ և օտարհաւատ
անուամբք քարկոծին, թէն գիտեն իսկ ոչ, թէ ով, կամ յոր-
պիսեաց ոք լուսերն էր և զինչ նորայն քարոզութիւն:

Թաղիադեանն Սեսրովիք՝ զորմէ լուսեալ էք թերեւ, եկեալ
ի Հնդկաստանէ ջան գնէ դպրոց բանալ յաւերակս Վաղարշա-
պատայ՝ առ ի լոյս ծագել որդոց Հայրենեաց: Հրացք է՝ թէ
դայցէ ի գլուխ ըստ յուսոյն՝ զոր ունի:

Իմ այժմու վիճակ ոչ եկեղեցականի է և ոչ աշխարհակա-
նի. կեամ որպէս օրէն է կեալ պանդիստելոց յանծանօթ երկրի.
յօրէ յորմէ հետէ հրաժեշտ ետու գլխովին ի ծառայանարոյ
ծառայողացն կրից՝ Եջմիածնեցւոց, կեամ այո այլ աղքատին
կենօք լուռ մուռ անկեալ յաւերակս սուրբ Սարգիս անուա-
նեալ ուխտատեղոյն ընդ ծերունոյն Հ. Մանուէլի խարշիմ
խարչատիմ մանաւանդ յորժամ զանսպայիցն յաջողութիւն տե-
սանեմ: Միմիայն միմիթար մնայ ինձ այն՝ զի անհամեստ Հ.
Սալլաթեան ողւով չափ տքնի զմիաբանութիւն իմն իրրե ըլ-
Միսիթարայն՝ հիմնել, որպէս գիտէքդ, և զմեղ ի գող իւր ժո-
ղովել, այլ ո՛հ, զիմարդ յամենայն ժամ խափանարկուք ընդ ա-
ռաջ ելանեն: Եղբայր իմ, իոհան մոր ի մեզ մեռանի, և զմեղ ընդ
իւր մեռուցանէ: Վառեալ եմք հոգւով ես, և առաւել հոգե-
կիցն իմ Առաքեալ դաիր Արարատան, այլ ի ձեռաց մերոց
վճարի և ոչինչ, Յոյս իմ առ Քեզ է Խաչատուր իմ, Խաչատուր
իմ, Խաչատուր իմ:

Այրեցին լափեցին զիս Եջմիածնեցիքն Խաչատուր իմ,
այլ փառք նախատեսանողին անսահման բարեգթութեան, ողջ
եմ, և չկամիմ ճաշակել զմահ, մինչեւ փարեցայց զլանջօք անձ-
կալոյդ: Ակն ունիմ թէ զընթացս ուսմանդ յոր բուռն հարիք,
աւարտեսցիք ոչ անադան:

Այլ իմ իզուր իզուր ծախսեցան աւուրք ի հաւաբոյնս անդ էջմիածնի ոսկրամաշ գրագծութեամբ և ծախսին իսկ ցայսօր աստէն վհատութեամբ։ Չմեղանչիմ որպէս քարկոծիմս, ասելով թէ ասխաբակ աղինք, յորս յաւէտ եկեղեցականք կոյր են կամ գէթ միականիք։

Գեղամովին յայլակարծուց իմն պակսեցաւ կոխելոյ զերկիր, նպիսկոպոսունք Մարտիրոս տեղապահ, Ստեփաննոս Տեղապահեան, ժամօրհնող Փիլիպպոս, Յակովոս Կոնտեցի, Մատթէոս Յովհաննէս կ. Շահրիսարցի հիւրընկալ, Խանակ սարկաւագ Դեղամով և այլք չողան յաստեացս վայելել յանտիս։ Խանակ վարդ. Դարբինեան հեայ ի մահիճս։ Այս է արդի վիճակ Աթոռւոյն։

Չմարթիմ փութով առնուլ յընտանեացդ զգրաւոր տեղեկութիւն զիլճակէ իւրեանց կամ գէթ զպատասխանի թղթոյս, որոյ պատճառ կարծեմ այն է զի նոքա չեն սովոր արկանել ի փօշտ զթուղթ, այլ սպասեն ուղևորի, որ ոչ միշտ պառահէ։ Շատ լիցի ձեզ այժմ գիտել, թէ նոքա են յողջիք բարօրութեան, ընդ որս և ես իսկ աղօթող լեալ վասն ցանկալի կինդանութեան անհամեմատ սիրելոյդ, գոչեմ համարձակ՝ ես Խաչատուրայ, և Խաչատուր ինձ։

(Փարոս № Ե. 76 թ.)

Սրբազնակատար քահանայասպետ

Ամենաողորմած Տէր

1. Ի դարձուցանել իմում դդէմս առ Հայրենիս, ներկայանայ ինձ նոր երեսումն, արեգակնակերպ ճառադայթեալ իմոյս Հայաստանի, և խնդութիւն հոգեպարոյլ փայլի, փայփայի ի դէմս անոցիկ ընդ որս անցին այն ոսկեդէն աւուրք մանկութեան իմոյ։ Ամենայն բերան ի գոհաբանութեան և ամենայն սիրո խնդայլց ովսաննիւք որ ընդ առաջ ել նոր փեսայիք։ Այս երեսումն սիրելի, այս խնդութիւն համազգային մոէ և զիս, թէ և ի բազում տարածութեան պանդտացեալ, ձայնակից և երգակից ընդ այլ եղբարց իմոց և համազգէկից ելեալ ընդ առաջ նորա օծելոյդ և ի սեղան սրտիս ընծայաբերեալ Զերդ սրբազնութեան զիմ մանկական գոհաբանութիւն, զիմ մանկական շնորհաւորութիւն, առի ընդ երկար և բախստաւորեալ աւուրք խնդրել Զեղ վայելել զայդ տուր երկնածիր. զդահ իշխանական բազմերախտ Հօր մերոյ և երջանիկ նահատակի սրբոյն Գրիգորի. խաղաղութեամբ և անվլուվ յար մնալ ձեզ յաթոռ նոր և ի փառս՝ զորոց կախին սիրոք ամենայն Հայկազնէից։ Զայս ցանկայ և ինդրէ ձեզ սիրտն որ կիսով չափ պատրաստ է մենել ձեզ մտերիմ և հայրենեաց հարազատ և վասն անուան նորա անձնանուէր և կենսանուէր։

2. Երեսումն այս նոր և պանչելի ի դարս փրկութեան Հայաստանի լինել գահակալ և դարապղուխ ի ժողովել որդոց նորա, լինել հայր և հովուապետ, նոր կայսր, նոր աշխարհ, նոր ազգ, և նոր հայր ազգի: Եւ որ առաւելն է, դուք օրհնութեամբ նախնոյն ձերոյ ժառանգեցիք զայդ գահ, ի կենդանութեան նորա վայելէք յաջորդութիւն, որպէս թէ ցուպլինել ծերութեան նորա ցուպ և ժողովրդեան յանձն եղելոց այժմ Ձերդ հովուապետութեան: Օրինակ-անօրինակ զորս երջանիկ որդիք և օրհնեալըն յԱստուծոյ միայն վայելցեն և վայելեն: Զինչ ոչ արգասաւորեսցէ առ այս զերմ օրհնութիւն ձեր (ծերունոյն) յԱստուծոյն, որ բարեբախտութիւն ոչ աստուածային այժմ ի կեանըս ձեր, մինչ երջանիկն ի հողածինս օրհնութեանց և ետ ըսպակ ձեր ի գլուխս ձեր, աչք նոր տեսին զձեզ փառօք պատկենալ և սիրտ նորա խնդաց առ այդ, յորս խնդաք դուք և ամենայն որդիք հօտի ձերոյ, Ոչ անխորհուրդ այս տնտեսութիւն նախախնամողին, ոչ առանց բարեյաջող նպատակի այս կառավարութիւն վերնոյն, որ կշռով չափէ և կնքէ զվիճակ և կարդ իւրեանց ստեղծուածոց, լինել հայր ազգի, գլուխ եկեղեցւոյ, կառավարիշ ժողովրդեան: Հիք ինչ ի հողեղինացս պատուականագոյն ինչ քան զայս, չիք ինչ գերազանցագոյն զորս երկրածին ոք կարասցէ ընդունել ի ծառայութենէ բարձրագոյն: Եւ ո՞ր սիրտ ոչ խնդացի առ այս, ո՞ր բերան ոչ լիցի տէրահամբաւն վերին պատրաստութեան: Աւետիս մեղ նոր, կրկին աւետիս: Տարածեցէք յայսմ շրջանի զլոյս ձեր և ամենաբարձրեալն առաջնորդեսցէ զընթացս ձեր ի բարին և ամենայն համազգիք օրհնեացն զաւորս ձեր և զանուն լի յուսով և միմիթարութեամբ:

3. Եթէ միմիայն զ իսուեցայց, այո երջանիկ է նա՝ որ ժառանգեաց ցայդ տեղի, այն զի ազատ է այժմ ազգ մեր, ազատ աշխարհ մեր, եկեղեցիք մեր, աթոռս մեր և խաչն Փրկչական ամբառնայ, վերամբառնայ ի հալածեալ զամբարիշտս և ի բարձրացուցանել, ի պաշտպանել զփրկեալս իւր: Այս դար է յորս միմիայն յաղթականաց և մեծաց մնայ միայն ժառանգել զանմահ անուն ի յիշատակ և ի սիրտս յետ մնացից: Այս դար է, յորս առաքինիք, յուշ ածեալ զանթառամ պսակին պատուականութիւն, ջանան, ջան գործեն զվայել միայն բուռն հարկանել, վայելչացուցանել զեկեղեցիս, պայծառացնել զազգս, լուսաւորել զժողովուրդս, բախտատորել գհայրենիս, ձեռն տալ անկելոց, կանգնել զգլորեալն, շինել զաւերեալն, դարձուցանել զտկարն և յամենայն յամենայնի դարման տանել ի կանգնել և ի նորոգել զմուզայս իմաստութեան, ուր նախնիք դրուատեն, առաքինիք ներբողեն, վատք անգուսեն, սիրտ հայրենասիրութեան կենդանւոյն, մեռեալ ոսկերք ազգայնոց զուարթանան, փառք հայրենեաց մեծանայ, մանկունք զենտս քաջութեան նախնեաց որոնեն, մանկութիւն դալարի ոգւով մեծագործութեան

և ձայնք գովշաց խառնեալք ընդ ձայնից հրեշտակաց, պատուին անմահացնեն զանուն պատճառին այնոցիկ ամենայնի Առ այս լի է յուսով միրտ իմ պրաղնասուըր Տէր քահանայապետ, թէ և առաջի ձերդ յարաբթուն և տուաքինասէր հոգւոյ պանան մտածմունքս այսոցիկ. անցեալ փառօք մեծագործութեան քան զայլ ամենայն նախնիս ձեր, գերազանցեալ մեծագործութեամբ, որպիսին Ներսէսն առաջին մեծ և Ներսէսն երկրորդ չնորհալի, ստուել արկանել շրյ նոցա. մնալ ընդ ստուերեաւ. Այս, ոչ է կենդանի այժմ աղդաշէնն Վ.ռ.ամշապուհ, մեծա արքայն մեր. ոչ տիրեն աշխարհին մերոյ այնոքիկ սիւնք հաստատութեան, իշխանք և ազատք աղդին մերոյ, այլ մեծ է կայսրն մեր, մեծ իշխանութիւնն նորա, մեծ սէր և բարեգործութիւնն նորա առ աղդն մեր, մեծ տիրախնամ հովանաւորութիւնն նորա, առ ի բախտաւորել զազդ մի թափառեալ, որպիսի է ազդ մեր, քաղցրահայեաց աչք նորա անորոց ակնարկ է հայի յորդին Հայաստանի որպէս յորդիս Ռուսիոյ. Աննախանձ սիրոյ նորա չիք ինչ զանազանութիւն, եւ նա ընտրեաց զգեղ և նա կացոյց զձեղ լինել հովուապետ և գլուխ աղդի մերոյ, ուրեմն որ ճանապարհ, որ հնար մնայ ձեղ փակ համեմատ ցանկութեան և կամաց ամենաողորմած կայսերն մերոյ, վարել և բախտաւորել զազդ մեր, ճանել զնա ի խորին մթոյ տգիսութեան ի լոյս տունջեան լուսաւորութեան. ի բաց առնուլ զանուրն զժուարատանելի ծառայութեան և ընձեռել սրտից և կենաց նորա զնոր հոգի հայրենասիրութեան և նորաստեղծեալ զխախտեալ և խամրեալ շինուածն կործանել, ի ձեղ յառին այժմ աչք ամենայն հայրենակցաց ի նորն դարու ազատութեան մերոյ, տալ մեղ զհին բախտաւորութիւն, նոր հոգի բարեբախտութեան, նոր հոգի հայրենասիրութեան և նորաստեղծեալ զխախտեալ և խամրեալ շինուածն կործանել, ի ձեղ յառին այժմ աչք ամենայն հայրենակցաց ի նորն դարու ազատութեան մերոյ, տալ մեղ զհին բախտաւորութիւն, նոր եպ սի այ կանդնել ի պատմութեան աղդի մերոյ և պատմութեան օտար բազեայց, Բաւական տքնութեանց ազդ մեր, բաւական թափառանաց ժողովուրդ մեր, բաւական չարչարանաց եղբարք մեր բաւական տառապանացն հայրենակցը մեր, բաւական է լաց որբացեալ հայրենի մեր ի վերայ կորսատին սիրելի որդոց իւրոց և փլատակը ոսկերաց նախահարց մերոց բաւական թաղցին ընդ փոշովք մոռացութեան. ի վաղուց հետէ ոչ տեսին նոքա չար և նորածին որդոց իւրեանց ոչ լուան նոքա զդրուատ անյեղծանելիք քաջագործութեան իւրեանց, ոչ քաջալերեացն հետապնացութեամբ հաւատարմաց իւրեանց և նորա թանկագին արիւնս նահատակութեանց նոցա վասն աշխարհին մերոյ, խառնացն արիւնք ստրկաց և գերելոց յաշխարհին մերում ի ծառայից անօրինաց: Այս ամենայն են արձանք պքագէմք՝ յօրս ոչ առանց խորին թառաշման և վայի և արտասուաց հայի ամենայն սիրտ հայրենասէր, արձանք յօրս քաղի և մաշի հոգի իմ ընդ յուշ ածելն իմ զայնպիսի հոգը նախնիս և ի տեսանելն զիս զայնպիսի տկար գերիս ի ձեռս օտարազգեայց, և որպէս

իմ, նոյնպէս և հաւատարիմ և վասն այնոցիկ՝ յորս սիրոս սկըսաւ ջեռնուլ կայծն հայրենասիրութեան, և յորս տակաւին ունի ջեռնուլ, ով որպիսի ասպարէզ հայրենաշինութեան, բարեկարգութեան, որպիսի ասպարէզ անմոռաց վաստակոց աստ մեզ այժմէն դար, և յայսմ ասպարիզի ով նախագլուխ, ով նախաթռու, եթէ ոչ դուք Աստուածարեալ քահանայապետ, պարտէ կրկին սպասեալ նոր միջոցի, պարտէ զանց առնել զայսու բարեյաջող պատահմամբ: Ահա ասուարէզ, ուր հարկանեն երակք թագաւորաց և յանմահական փառս կրթելոց, խաղցէք յայսմ ասպարիզի և ահա ամենայն որդիք ձեր կուռն ի կուռն, սիրո ի սիրո համակիլ, պարեսցեն և ճախրեսցեն յաջմէ ձեր և յահեկէ: Ասս ընկեսցի թուլամօրթն, վեհերոտն, որովայնասէրն, արծաթասէրն, աստ պասկեսցի առաքինին, վեհանանձն, հայրենասէրն, ազգասէրն, Աստ ամաչեսցին կանացի տէր Մ և շահատակեսցին և պարտեսցին Սալլնդեանք, Մոռոր, Առաքել և այլք նոցա նմանիք: Աստ զինուորութեան երկնաւոր, ուր չարք վատնեսցեն, և առաքինիք բարձր ի գուխ վերճնեմեսցեն շբովք: Այս խրատէ սրբազնասուրը քահանայապետ, զորս ինքնին հաղորդակիցք ինձ ի բաժանելն ձեր ի ծփիսեաց այն ինչ ես համբռուրեալ զաջս ձեր ի վեր մարդիկանի Սիմէօն եպիսկոպոսի, կամէի առնուլ զվերջին բարեաւ մնալն կնքեցիք զսիրա իմ և զլսելիս այսու անմոռանալի բանիք, մի մոռասջիք զհայրենիս ձեր: Այս խրատ այնպէս քաղցը սրտի իմոյ և դալարացուցիք ոսկերացս որպէս կաթն մօր իմոյ, ոչ ելցէ ի մտացս, որքան շուռնչ իմ կայ յիս, որքան մարմին իմ զկենդանութիւն վայելէ, ես պահեալ զայն իրրև աւանդ Աստուածապարգե, այժմ վերադարձնեմ, վերակրկնեմ լի չնորհակարութեամբ: ոչ մոռանամ զհայրենին, որքան կեայ և իշխէ գործսդ և Հովուապետսդ, ոչ մոռտնամ զայն և ահա յետ սակաւ միջոցի, ես հայրենեաց և հայրենին իմ ինձ: Եթէ զիս այդպէս խրատեցիք, ապաքէն սիրո իմ լի է յուսալով թէն ամենայն սոտրադրենալք ձեր զնոյն ընկալցին խրատ, մի գրիել, դատափետել զհայրենին, այլ կառուցանել, շինել և հաստատել Ապարախանէ՝ որ հեռացեալ ի հայրենեաց, գտաւ զվայելչութիւն յօտար աշխարհի, մոռասցի զհայրենին, այլ ապարախտագոյն ևս որ ի հայրենուջ անդ խեալ զվայելչութիւն այլոց, ստորացեալ զարժանաւորս, հարստահարեալ , յափշտակեալ անարժան ձեռօք զփառս եղարց իւրոց, կամիցի աստուածանալ, , փոշտեսակ շահիւք և որք կեղտ անարդանք են այլանդակ երեսաց իւրոց, եղիցի աղաչեմ, այս սուրբ խրատ ձեր և այլոց „մը մոռանալ զհայրենիս“: որպիսիք ծէր Մարուքեանն է և այլք: Կնքեսցին այսպէս բանք ձեր յայնոսիկ սիրոս՝ որք գոհական չնորհակալութեամբ անմահացուցանեն զանուն ձեր աստ և ի հանդերձելումն, սիրո իմ լի է յուսով ասեմ և հաւատացեալ ի բանս ձեր, թէ այժմ

Մշագեսցին զձեզ ոչ դասք հայրենատէից, այլ հայրենասիրաց, ոչ տղիտաց, այլ իմաստնոց, ոչ մարմնամոլից այլ մարմնատէից և փոխանակեսցին ընդ երջանիկ հովանաւորութեամբ ձերով խրճիթք դեմոնց ի պալատու և պալատք անիմաստից ի խրճիթք, կշիռ, չափ և օրէնք զրոյ ամեն ոք իրաւախոն գովիտ և ճառաբանէ: Անհնարին լինէր ինձ գտանել բանս յառաջ բերեալ անդէն զօրինակս ի լուսաւորեալ նվրոպիոյ. այլ մեր ի գրացեաց մերոց առցուք զօրինակ: Սուլդանն թուրքաց եղեալ է զանձն ի մահ լուսաւորել զվայրենացեալ ազգ իւր, որովիսի նահատակութիւն: Փաշան նդիպտոսի բաց ի բազմօրինակ բարեկարգութեանցն յաշխարին իւրում, առաքեաց յանցեալ ամի զէս մանկունս արաբացիս, կրթել և փարժել երրազական ուսմամբք ի վարժարանս Փարիզոյ, որպիսի ազնիւ ձեռնարկութիւն: Արքայն Զերփիոյ՝ որ ի նորոգ ազատեաց զագդ իւր ի ծառայութենէ տանկաց օգնութեամբ հզօր տէրութեան Ռուսաց, առաքեաց նոյնակս մանկունսն կրթել յնւրոպիոյ: Եւ մեզ միայն մնացէ ոչ հետեւել այսմ, մեզ միայն մնացէ հայել միշտ ի վատաբախտութեան ազգին մերոյ և բացասել նմտ զօդնութիւն: ի լուսաւորութենէ կանգնի ազգ ինչ, ի լուսաւորութենէ ելանն ամենայն բարեկարգութիւնք, լուսաւորութեամբ հաստատի կապ հպատակաց առ իշխանաւորս իւր, սէր առ հայրենիս իւր, սէր առ բարեկամս իւր, հնազանդութիւն առ կայսրն, երախտագիտութիւն առ երախտաւորս, պաշտպանութիւն Հայրենեաց:

Քանի՞ բարիս ոչ գործէր Սիմէօն կաթողիկոսն, եթէ լեալ էր յայսմ դարսոջ, այլ նա նոյնպէս իւրովսանն ազգաշնութեամբ ոչ ջնջեսցի ի յիշատակէ ամենայն հայրենասէր հոգույ: Սյո երախտագէտ յիշատակ կամի և ջանայ դրել յանմոռացութեան և զանուն ձեր այս հաւատարիմ սիրո ցանկայ տեսանել զձեզ իսկապէս ջերմ ցանկութիւն և խանդանք ի հաւատարիմ սրատէ ընդունելի եղիցին ձեզ, քան բիւրազգի պահածանք և կեղծք մարդեկոյզ բարեկամաց բախտի, որոց սիրտս մտան չարիք, այն ինչ բերան նոցա զհաւատարմութիւն խոստանայ, ծածկեալ զդառնութիւն որ ընդ քաղցրութեամբ մեղու: Ցաւօտ տեսանեմ զանցատեալ ազդի իմոյ որ ի Կ. Պօլ, և երկշմ թէ մի գուցէ և մնացեալք հետևեսցեն նոցա օրինակի. պատճառ ինքնին խօսի թէ յոր կողմանէ երանէ այս, վասնորոյ և ես թոյլ տամ ինձ լրել և մաղթեմ երեսս անկեալ իբրև իսկական որդի, ջնջել զայս ախտ ազիտութեան յերեսաց ազգայնոց մերոց, ժողովել զպիտանի անձինս, որք կարեն օժանդակել ստորանգեալ բազմութեան: Զմինն ահա ունիք ի ներկայութեան, զՄեսրոպ թաղիադեանն—եղիցին ընկերք նորա բազում, բազում, բազում: Գանձք ձեզ եղիցի որդիք Հայաստանի և լուսաւորութիւն նոցա ձեզ փառք անմեռանելի: Նթէ ես որ այսպէս սիրէի զհայ-

բենիս, արտասաօք, անհաց, անպաշար ելի ի նմանէ, զի՞նչ եղիցի նոցա, յորոց միտս դեռ չէ ծագեալ թէ զի՞նչ է հայրենին և զի՞նչ սրբազն պահպանութիւն նորա: Ես անդըէն դառնամ, սէր նորս ոչ թողցէ զիս ուրեք թէս բիւրաւոր բարեաց իցեմ աստիչ մասնակից յօտար աշխարհի, այլ ո՛չ ոչ այսպէս խորհի ամենայն ոք, ոչ այսպէս ցանկայ ամենայն սիրտ, առուապակրութիւնք նորա յերեսաց, տգէտ, յիմար, անսիրտ հայրենակցաց իւրոց, յանդիմանել նմա ամենայն ուրեք և նա վճռէ հանգստեան աղքասանալ յօտարիս, քան հոգէմաշ շաւաշի ի ձեռս անողորմից: Ոչ պարսիկ, ոչ թիւրք, այլ մեզ մեղէն իսկ եմք պատճառք կորսեան մերոյ և կործանման մերոյ, ատելով և հալածելով զիրեարս, ոչ մնաց ազդ ի բախտաւորութեան առանց միասիրտ միաբանութեան: Կորնչին աներևոյթանան ամենայն կապք և օրէնք մինչ յիմարք իշմեն իմաստնոց, մինչ հայրենաստեացք, հայրենասիրաց, մարմնապարարք—ողջախոհից: Դեռ սարսին ոսկերք իմ, յուշ ածեն իմ զդժնզակ կատաղութիւն և զյափշտակումն ընչից և հանգերձից իմոց պատուական հայր Յովսէփի Տէր Մարուքեան, սասանելի դէմք նորա ընդ առաջ ելանեն ինձ յամենայն անկեանս, նաև ի լայնակէտ հեռաւորութեանս, այլ ես քրիստոնեայ եմ, ունիմ զսիրտ քրիստոնէի, զսիրտ հայրենասիրի, համեմորող, ներող (Երկայնսմիտ) լի սիրող առ բարեկամս և առ թշնամիս, յիմմէ կողմանէ ներեմ նմա զամենայն հարստանարութիւն իւր ընդդէմ իմ, այլ ի հայրենեաց կողմանէ աններելի են նմա, զոր առնէ, և նմանեաց նորա: վաղոց կամ անպան ոչ թողցին սիրոք հայրենասէքք խնդրել զիլէ՛ծ արդար հատուցման ի նմանէ և ի նմանեաց նորա: բոլոր բոլոր հայրենին մեր չէհպատակ նորա և ոչ ամենեքեան տիմարք զանցառուք, որը տեսեալ զակնյայտնի զամենայն չարիս, տմարդի թուլամորթութեամբ լուեն: Արդարախոն սիրտն ընաւ ոչ լուէ յաս և ոչ ներէ զի բոլոր ազդ և վիճակ համայն ազգի մերոյ եղիցի յընդունոյն զոհ միոյ միայնոյ անհմաստ անձի: Այժմ կայսրն մեր, իրաւախոն, արդարակշիռ, աշարությ, բարեացակամ, բարեհանոյ առ հպատակս իւր և ոչ սեսադէմ պարսիկը ուր ապաստանարան էր այնպիսեաց, ամենայն անիրաւութիւն դատեսցեն, ամենայն զբկալ բաւականասցի և արժանին արդար վրիժուց ընկալցի զնատուցումն: Համարձակ խօսեցայ և խօսիմ, այլ ես յուսամ թէ անկեղծ, աներեսապաշտ այս, յառաջալըրութիւն և սրտաբացութիւն ոչ տնանոյ թուեսցին բարեխորդուուրդ քննողութեան արդար դատաստանի մտաց ձերդ սրբազնութեան: Սիրտ հաւատարիմ պարտէ լինել միշտ բաց թէս բիւրաւոր հալածանք դիմագրաւեսցեն նմա, և նա է ճշմարիտ բարեկամ որ առ ականէ զարդարն խօսի, թէս կեանք նորա իցեն անդէն և անդ մահու վտանգի: Անհնարին է ինձ տալ չափ կանացի լուութեան, մինչ լսեմ թէ Մասուր պատուական դպիրն ի Տփխիս սովամահ ճնշի և ընկերք

նորա զորկորեայս պարարին։ Աղաչանք ելանէ նորա յամենայն ժամ ի բարձունս և ամենաբարձրեալն ոչ իսպառ դարձոյց զակն, ոչ ինամել նոյսա, նա՝ որ և թունոց անգամ հոդ տանի, զի ապրեացին. թէ ոչ հայրենազդիք դժասցին նոցա գացին օտարազդիք՝ որք դարման տանիցին նորա մարդկային պարտաւորութեան։ Զեր քաղցը ակնարկութիւն քաղցրացուցէ զվիճակ ամենեցուն այնոցիկ և տէր տացէ ինձ ի մտանել իմ ի հայրենիս, յիրավի ի հայրենի մտանել, և մի յօտարինս։

Ի վաղուց յետէ կարծեմ թէ ոչ հասին լուրք բարեհամբաւք յինէն առ ի ուրախ առնել զսիրտ սրբազնատուրը Տեառնդ և որոց առ իս են սէր և զթութիւն, և այս յիրաւի իմ պարտաւորութիւն. զի այսչափ անաղանեցայ։ Պատճառ լուռութեան իմոյ էր մանաւանդ անընդհատ փոփոխութիւնս այդք, և ես սպասէի խաղաղ ժամու, որպիսի այժմ, յորս սրբազնութիւն ձեր գլուխ կարդեցաւ ազդին իմոյ. Այս բարեւզատեհ էած, զարթոյց, զուարթացոյց զիս առնուլ զգրիչ և գրել, զոր գրեցի. այլ մինչև ցարդ դեռ ոչ կարացի պատմել զինէն և զիւնակէ իմմէ։ Սիրտ ուրախ, լի զմայլմամբ բարեհամբաւ լրոց, դժուարաւ զգայ իւրն Յօրէ յորմէ յետէ մտեալ է իմ ի բարեշէն քաղաքս Դորպատ և կենալցեալ ընդ պատուական ազգին Գերմանացոց և մտեալ ընդ անմուանալի բարերարին իմոյ Բարբոտի և սկսեալ խաղալ ի դաշտս գիտութեան, որոյ բարի աստ մուզայն, չգիտեմ, զիւնակ անցանեն, թուշեն աւուրք իմ. իբրև քուն, իբրև երազ քաղցրահանդիսաւ. Ի լրումն նպասակի իմոյ առ ի կատարելագործել զիս յուսման և ի հարկաւոր գիտութիւնս՝ որք պիտանի են յաշխարհին մերոյ, զի ինչ երկրայել, երթայ որպէս հարին է, ըստ կամաց և ցանկութեան իմոյ. Մեզուազիտութիւնն գերմանացոց, լատինացոց եւ այլ զանազան ուսմունք խելն յինէն զթանգագին ժամանակին իմ եւ ես ի նոցանէ զհանոյս եւ զկերակուր մտաց եւ հոգւոյ. Այլ թէ որ անձինք որպիսի երեւելի, պատուական, իմաստուն պրօֆէսորք եղեն հաղորդակից եւ խնամակալու օտարութեան իմոյ, ոչ կարեմ զանուանս նոցա առանց մեծի շնորհակալութեան եւ գոհութեան ի բերան բերել եւ ի զիր արձանացուցանելի. Միայն փոխանակ այժմ բաղումք (քաղցը գիր, որք մարդասիրութեամբ եւ ազատահոգութեամբ, հիւրասիրութեամբ եւ օտարասիրութեամբ իբրեւ զաստեղս փայլեն յաշխարհի, ոչ թողուն եւ վայրկեան մի դառնանալ վիճակի իմոյ եւ կամ տիրել սրտի իմոյ) ի սէր նոցա եւ բարեկամութիւն վայելեն զաւուրս ի քաղցրազին վիճակի. Այսօր առ մինն վաղիւն առ միւսն եւ տուն նոցա տուն իմ։ Աչք իմ դեռ ոչ հաւատան թէ այս ամենայն սէր տուեալ լինի այնմ՝ որ հալածեալ կար ի հայրենակցաց եւ ես զայս ամենայն տամ ոչ անձին արժանաւորութեան այլ սիրոյ հայրենեաց, որ սիրելիս արար զիս աստ եւ առնէ. որքան նորդի բորբոք նորա այնքան յաւելանան սէր եւ բարե-

կամութիւն սոցա առ իս: Եւ նոյն իսկ լուսափայլ մինիստրն լուսաւրութեան արտաքոյ քան զարժանաւրութիւն իմ բաղդաւոր առնէ զիս: Միջոց առ միջոց մարդասիրական հաղորդակցութեամբ և հարցմամբ իւրով զեղանակէ իմմէ: Միմիայն հայկագուն և բազում և չնորհամիտ գեր. ամենեցուն աչք սիրով հայի առ իս: Միրով զպանդխտութիւն իմ սփոփէ, ամենայն ոք միմիթարէ զիս, ինդայ ընդ յառաջադիմութիւն իմ, մանաւանդ պատուական պրօֆէսորը և ազնիւ տիկնայք գերմանացւոց, ոչ հնացուցանէ ժամանակին հնութիւն զսէր նոցա, այլ մանաւանդ որքան յերկարին աստ, առ գովանի ազգս, այնքան բազմանան դասք հաղորդակցաց վիճակի իմոյ, ոչ ոք ի մերայնոց հաւատայր եթէ ինչ ինչ յաստային կենաց իմոց նկարագրէք աստէն: Ոչ, երանի թէ և այլ աղդակիցք իմ ստանային առ իս զայս խընդակցութիւն, առ շնորհամեծար աղդս գերմ. և ոչ ես միայն, Զի սոքա են յիրաւի պատկերք մարդկային զգացութեան: Այլ յայսմ ամենայնի և օրինաց իմոց պահպանութիւն կայ միշտ առաջի աշաց իմոց: Բարերարն իմ մեծաստիճան Բարրօտ որ այժմ բեկտոր է տեղույս համալսարանի, յետ այնքան անփոխատրեկի երախտեաց իւրոց ի վերայ իմ, ընկալաւ և զայս վաստակ յանձին, որ մեծ է վասն իմ և անվճարելի, զի պահոց աւուրս առ ինքն հաշեցից, բարեպատշունի ամուսին երկրորդ մայր իմ և բարերարունի պատրաստէ լուսաթաթիւ ձեռօքն զայս (կերակուրն վասն իմ): Եւ այլ և կին անդոյդ երախտաւորք իմ, ոչ որոշն զիս ի դասուց այլ սիրելի ազգակցաց իւրեանց ի քաղցր շրջանս ընտանեաց նոցա մի կամ և ես համարեալ ի նոցանէ: Ի վեր քան զակնկալութիւն իմ սէր նոցա և յարգումն առ իս: Հոգի այլոր առն մեծի առաւել տանջի վասն հայրենակցաց իմոց, և առ ի պահպանել զիս յօրէնս և ի ծէսս մեր, առ ի լուսաւորել յօգուտ աղդին իմոյ քան ուրուք այլ հայրենակցի, բարերար երկինքն վճարեսցեն նմա վասն ամենայնի, զոր նա առնէ, զի ես և աղդ իմ շնոք բառական առ այն: Ահա ստորագրութիւն արդի դրութեան իմոյ. այլ միթէ խախտեսցեն այս ամենայն վայելլութիւնք զջերմեռանդութիւն իմ առ հայրենիս: լուծցեն այս ամենայն բարեմասնութիւնք զիս ի սիրայ նորա, ծն անդր, չիք իմ այլ նպատակ առաջի, բայց եթէ ի հայրենիս հեռանել, և ծիսել զնուազ շունչ. իրբն զխունկ առաջի ոսկերաց նախահարց իմոց, թողյիմարք խափեսցեն այսու և ըստ առակին մտեալ ի տուն հարսանեաց, ասասցեն շայս լաւ է քան զտուն մեր, իմ տուն հայրենիք իմ, իմ վայելլութիւն մեռանել վասն նորա, իմ վառք որդիք նորա, յորոց շրջանի ակն ունիմ տեսանել զիս՝ երբեմն և շարժել ի գիշերի և տունջեան սլանան, վերանան ի միտս իմ այն նազելի կողման Արարատայ, յորս երբեմն խաղացի ըղիսադ ոսկերէն մանկութեան իմոյ և թէ երբ տեսից զձեզ, երբ արժանացայց ներկայ յանդիման մատուցանել ձեզ զիմս երկըրպագութիւնս, այդ մութ անյայտութիւն ծածկէ, նսեմացուցա-

նէ երբեմնակի զմիսս իմ, բաց յորոց չեք իմ այլ պակասութիւն, և յիշաւի երր ծածկեսցէ սիրելին գետին Հայաստանի զանպիտան ոսկերս իմ, խառնեսցի արդեօք փոշի իմ ընդ երկրպագելի փոշայ իմոյ հայրենակցաց իմոց: Ոհ, Աստուած իմ, երբ տեսցէ զայս աչք իմ, երբ յանդիմանեսցէ ինձ ծովս հայրենեաց իմոց, երբ ծիծաղեսցին ինձ ցանկալի լերինք Հայաստանի. անդ, անդ սպառեսցի շունչ իմ, մինչ կրկին ծծեցից զմարմանդ գետիւու հարաւոյ, որ նազաքայլ է, որ ի վերայ ծաղկաբեր դաշտացն Հայաստանի անմոռանալի Հայրենեաց իմոց:

Սովորն խնդալից հոգով կնքեմ զբանս և մաղթեմ, զի ներողամիտ ընկալեալ զայս իմ որդիկան աւետարերութիւն ուրտի արժանի արասջիք զիս երբեմն յիշել ի գասս այնոցիկ, որք շղանակեն զօծեալ անձն ձեր,

Սրբազնասուրբ քահանայապետ
1832 Դերաստ զիս զնուաստ ծառայս
ի 2 Մարտի:

(Թիշատակ. Ե.)

(Մի քանի բառեր չէր հասկացւում, այդ տեսակ բառերի տեղ դիմ եմ քաշել):

Պատճէն այն խնդրագրի, որ ուղղուած է եղել առ սին-հոգոսն սուրբ էջմիածնի հոգեորականութիւնից ազատուելու համար:

Առ սինհոգոսն լուսաւորչական գահու սրբոյ Աթոռոյն էջմիածնի.

Ի վերակացուէ նահանգական ուսումնարանին Տփխիսոյ (исправляющай должностъ штатнаго смотрителя)

Խ Ն Դ Ի Ր

Ի տասնամեայ հասսակի մանկութեան իմոյ մտեալ ի. կրթութիւն և ընդ խնամարկութեամբ լուսածին գահու մտյր Աթոռոյ էջմիածնի, մնացի անդ զամս բաղումս, ծառայեալ գքանի մի ամիս իրբ դպիր, յետ ժամանակի մտեալ ի ծառայութիւն հանգուցեալ Անտօն արքեպիսկոպոսի, եկի նովին կոչ. մամր ի Տփխիս և ուսեալ աստ զամս երկուս. վերադարձայ կրկին ի սուրբ Աթոռոդ ի 1826 ամին, մնացի յընթացս երից ամաց առ ժամանակ մի, ընդ ծառայութեամբ նորին Անտօն Արհեոյ, յետ վախճանի նորա Եփրեմ արքեպիսկոպոսի յորմէ և ստացայ զլօրս աստիճան կիսասարկւագութեան: Յետ մահուան նորա կարգեցայ թարգման և գրադիր նորին վեհափառութեան հանգուցեալ Եփրեմ կաթողիկոսի, յոր ժամանակս ի 1829 ամի եհաս ինձ ողորմութիւն նորին կայսերական մեծու-

թեան, որ պատճառաւ թողեալ զպաշտօն հոգևորականութեան գնացի ի համալսարան Դերպատի, ուր մնացեալ զամս վեց յետ աւարտման ուսման իմոյ, վերադարձեալ միւսանգամ ի հայրենին իմ, թէև կամ էր ինձ ամենայն ջերմեռանդութեամբ ընծայել զանձն իմ անդրէն ի պաշտօն նախկին կոչման իմոյ, բայց բազմակերպ հանգամանք և մանաւանդ զգալով թէ փոփոխութիւն մտաց և վարուց իմոց ոչ կարէին պատասխանել ճիշդ, ծանր և ժուղկալու կենցաղավարութեան հոգևորական վիճակի, ստիպեցայ մտանել ի ծառայութիւն արքունական, յոր և գտանիմ ահա զամս երկու յընթացս բոլոր այսը ժամանակի, գիտէ ամենագէտն Աստուած, ես ոչ կամեցայ գլխովին թողուլ գնուգերական կոչումն, ցանկութիւն իմ այն էր, փորձել զանձն իմ և գիտել հաւասարի, կարելի է ինձ արդեօք յանձն առնուլ զայն և տանել ըստ արժանույն, բայց բազմադիմի փորձք զակառակն ցուցին ինձ, վասն որոյ կամք իմ է գոնէ այսու ընթացիք կենաց հայթայթել զապլուստ կենաց իմոց և յայս միսս համարձակիմ ամենախոնարհաբար խնդրել ի սըբազան անդամոց Սինոդոսի, որոց բազմաց յայտնի է վիճակ կենաց իմոց և որոց բազմաց սիրոց ցանկայ բարեբախտութիւն իմ, արձակել զիս ըստ օրինի ի կոչման իմմէ և չնորհել ինձ ամենագթածաբար զայն թուղթ, եթէ կարելի է երկու ամօք նումերով և թուղվ յառաջ զի մի երկամեայ ծառայութիւն իմ և արտօնութիւն ոչնչացի և իդուր անցցէ:

Միթէ ո՞ք աշխարհականք են, չեն որդի Աթոռոյն, միթէ այսու վիճակաւ ոչ կարեմ միշտ ծառայել նմա: Յայս սակա խրնդեմ մի անտես առնել զինդիր իմ և ցանկալ բարւոյ իմում, իբրև որդւոյ սըբայ Աթոռոյդ, յորմէ բազումք ստացեալ զբախագորութիւն կենաց և ես զիս ի նոցանէ համարելով մնամ իսկական գերայարգութեամբ

Խ. ծառայ Խաչատուր
Արովեանց.

1838 ի 15 Դեկտ.
ի Տփիսիս

(Խօներայ է եղել այս թուին և թուղթը ըստ նախնական սովորութեան ծակծկուած է):

Այս խնդրի վճիռը

Ի 23 յունուարի 39 ամի, ըստ հրամանի նորին կայսերական մեծութեան ի յուսաւորչական Հայոց սինօդի սըբայ Եջմիածնի լուան զիսնդիր վերակացուի նահանգական ուսումնարանին Տփիսոյ Խաչատորյ Ապովեանցի ի 15 դեկտ. անցեալ 38 ամի № 49 յորում գրէ...

Հ բ ա մ ա յ ե ց ի ն:— Համաձայն ցանկութեան կիսասարկա-

ւագ Խաչատրոյ Ապովեանց արձակել զնա բոլորովին ի հոգե-
որական տեսչութենէ, տալ նմա առ այն ըստ պատշաճին ըդ-
վկայական՝ զոր՝ ի պատճառս չմատուցանելոյ յիշեալ Ապովեանց
սահմանադրեալ թուղթ դրուագաւոր, դրեալ ի վերայ հասարակ
թղթոյ առաքել զայն կանոնադրեալ եղանակաւ առ Տ. նահան-
գագետն Վրաստանի, խնդրելով տնօրէնութիւն նորին գերա-
զանցութեան յանձնել զայն վկայական, ընդ ձեռն որոյ հարկն
է՝ Խաչատրոյ Ապովեանց առնելով ի նմանէ զձեռագիր վասն
ստացման այնորիկ. նոյն օրինակ պահանջեալ ի նմանէ զհասա-
նելիս յարքունիս, որպէս վասն ի կիր ածեալ աստ ի սիւնողո-
սիս փոխանակ արքունի գրուագաւորի երից թերթից հասարակ
թղթոց, զերիս ոռուալիս պլնձեայ, ըստ ներկայ գործոյս, որ յա-
ղագս արձակման Ապովեանց ի հոգեորական կոչմանէ, այնպէս
և զգին հասարակ թղթոյն յորոց վերայ գրեցաւ նմա վկայա-
կան արձակմանն, փոխանակ դրուագաւորի երեք ոռուրի ար-
ժողութեամբ, զերիս ոռուրիս ևս ընդ ամենայն զվեց ոռուրիս
պլնձեայ առաքել զայնս ըստ պատկանելոյն յօդուտ արքունեաց
և զհետեւմանէն առաքելով զյիշեալ ձեռացազիրն Ապովեանց
տալ տեղեկութիւն սիւնողոսիս:

(Քաղուած սինօղի օրագրութիւններից):

Препровожденное Дирекцію при предписанію отъ
24-го марта сего 1839-го года за № 380-мъ свидѣтельство,
выданное мною отъ Армяно- Григорянскаго Эчміадзинскаго
синода объ увольнение меня изъ Духовнаго вѣдомства, мною
получено, во удостовѣреніе чего и расписываюсь.

Исправляющій должность штатскаго смотрителя
Х. Абоянцъ

1839-го года 13-го Февраля
Тифлисъ

Դիրեկցիան ներկայացրել է կաթողիկոսին մայիսի 16-ին
1839 ամի № 5447.

Արովեանի նամակներից մէկն ուղղուած իւր աշակերտին:

1847 թ. օգոստոսի 17 ի Մասկուա առ չնորհափայլ որ-
դեգիր ձեմարանին Տեարց Եղիազարեանց Յարութիւն Խւզբա-
շեանց:

Հոգեկից իմ բարեկամ,

Հիմ փափագէի յայսմ իսկ ըոպէի անկանել ի գիրկս Զեր
և ներենզով ի սիրո սիրելոյդ զարտասուս վշտաց և ցաւակ-
ցութեան: Եւ յայսմ զրկեցայ ի քաղցր տեսութենէ ձերմէ, ա-

մենայն ինչ պատրաստեալ էր, եկի ի Թիֆլիզ առ Զեզ վերաթեւել:

Այլ զի՞նչ անիբար խօլերայն փշրեաց խորտակեաց զամենայն յոյսս և դիտաւորութիւնս իմ երանի թէ այս միայն իցէր տարաբախտութիւն իմ և ամենայն սիրելեաց և բարեկամաց իմոց. ոչ մնաց աչք, որ ոչ սզայ այժմ զթանգագին կորուստ սիրելոյ ուրուք: Ոչ մնաց սիրտ յամենայն տեղիս կառկառի, որ չէ վարակեալ այժմ արեամբ և կոկծանօք: Եւ մեզ պարտ էր ոչ մնալ անմասն յայս աշխարհաւեր հարուածոց և ես կորուսի զմայր թանգագին, զեղարյալ սիրելի, ոչ ասեմզը բարեկամս և զաղգականս բազումս. ցաւել արդեօք պարտիմք առ այս, թէ փառաբանել զամենիմաստ տնօրէնութիւն այնը, որ ստեղծն զմեզ և պահպանէ: Նըլոքեանն ևս պարտիք են մեր, ցաւել և սզալ զզրկումն ի սիրելեաց մշտապէս և փառաբանել զկամս ամենազութ Արարջին, որ հարկանէ և ինքն ևս բժշկէ զսիրտ և զնոգի մեր, փառեցարուք և դուք այսու հաւատով, այսու համերութեամբ, այսու քրիստոնէական և որդիական երկիւ զածութեամբ և Քո հայր պատուական և Քո քոյր սիրելի հըրճուին ամսով միով առաջ ի դասս արդարաց: Անդ ուղղեա յայսմհետէ զաղօթս և զշնորհակալու սիրտ Քո, օրհնեա զթանգագին ոսկերս և զյիշտակ հանգուցելոյն և փոյթ կալ արժանաժառանգ որդի ծնողաց Քո ազգի, զայս խնդրէ և մաղթէ ի Քէն Քո մշտահարազատ

բարեկամ

Խաչատուր Աբովեանց.

Նոյն Խւզբաշեանին և այս մարգարտաշար տողերն է ուղղում:

Կամայ ակամայ գրեմ ուուսերէն կամ գերմաներէն առձեզ, նայելով ի գրութիւնս ձեր Գուցէ ծուլանայք ի մերս բարբառ, ես ոչ զայդ խրատ աւանդեցի ձեզ: Աններելի է գիտել զտամն լեզուս, այլ ոչ զհայրենական, ուսարուք զնոխ և զքաղցը հայկաբանութեան առ պարոն Էմինն առ ի լինել Հայկազն ըստ հոգւոյ և մարմնոյ:

(Արտագրել եմ պ. Աբ. Յովհաննիսեանի մօտ, պ. Ա. Կանայեանի միջոցով):

Աբովեանցի տնսիլքը ըստ աւանդութեան:

«Խաչատուր Աբովեանին յանձնում են Ներսէս վարդապետին կրթելու, որ այդ ժամանակ նշանակւում է Թիֆլիզի առաջնորդ և իւր հետ վեցնելով Աբովեանին տանում է Թիֆլիզ, ուր ուսուցանում էր նորան, բայց ուսման մէջ Աբովեանը ոչ մի յառաջադիմութիւն չէ ցոյց տալիս, որի համար միշտ անհանգիւր է Ներսէսը և խիստ ցաւում էր այդ բանի համար»:

Արովեանցի անընդունակութիւնն կրթութեան մէջ զտաց-
նում է վարդապետին, ուստի և մի քանի անգամ նախառում է,
անարգում և մինչև անդամ ծեծում ու տանից դուրս է անում:
Հեռու օտար երկրում արդեօք ինչ կը լինէր Արովեանի դրու-
թիւնը, այնպիսի մի զգայուն մատաղ երիտասարդի, որը կը-
թութեան մէջ իրեն այնքան թոյլ էր զգում: Մի խիստ մտա-
տանջութիւն պաշարում է նրան, ալեկոնուած երիտասարդը
հանգստութիւն չունէր. նորա խիթճը իրեն տանջում էր, քանի
որ ընդունակութիւն չունէր, մինչդեռ դրա հետ խիստ փափազ
ունէր կրթութիւն և ուսում ստանալու Ներսէս վարդապետը
մի անգամ ծեծերով դուրս է անում նրան տանից.
Արովեանը փոքրիկ պարտիզում վարդենիների հովանու տակ
մեծ յուսահատութեան մէջ պարկում է և քնում. երազում մի
ալեզպարդ ծերունի հրում է նորա կողը և աւետիք տալով ա-
սում. «օրանից յետոյ լաւ կը կարդաս, վեր կաց և դնա
տուն». Արովեանը հարցնում է ծերունու ով լինելը և նա պա-
տասխանում է. «Դրեգոր Լուսաւորիչն եմ» և անյայտանում:
Դիշերով վեր է կենում և գնում առաջնորդի դուռը ծեծում,
վարդապետը գտւրս է զալիս և բարկութեամբ հարցնում—ինչ
ես կամենում, ես երգուել եմ քեզ չընդունել, —«սրբազն տէր
հիմա լաւ կը կարդամ, ընդունիր» և ընդունում է. «Հիմա լաւ
կը կարդամ» բառերը վերագրելով երկիւղի կամենում է հէնց
սկզբից նորա խարէութիւնը պատժել և առաջարկում է կար-
դալու մի բան. «Ընչանք ին վախտը ըսկի չէր կարըմ կարդայ
և ըսկի չէր կարըմ. ամեն մի կիրը կըմկըմալէն էր ասում—
հիմի զրի դայդա գնում է, ինչ դիք որ դնում են առաջը, բի-
րդի հաւասար էր նրա համար»:

(Համբարձում Արովեանց, աշակերտ Սրեանու թեմական դպրանոցի Ս. դասարանի):

**Խաչատուր Աբրիկսանի աշխատութիւնները եւ մի քանի ուրիշ Թղթեր
պահուած իւր յիշտառկարաններում**

1. "О курдахъ,"
 2. Восхождение на Ааратъ „Кавказъ"-пнг.

Վեննայի և Դորպատի թերթերում հնագիտական, ժողովրդական նկարագրութիւններ ունի.

Հայերն

(ԵՐԿԾԱԼ—ԳՐԱԲԱռ)

- 1 Տեսրակ.— Սիրբել և պատուելի եղայր, սկիզբն ա-
զատական ճարտարապետութեան. յազատութիւն Հայաստա-

նեայց (հագներդութ) ի 19 յունվ. 1830 թ. օրինակ վերապա-
տուելի վարդապետաց Տէր Տ. և. Մկրտչի վարդապետի և Իգնա-
տիոս վարդապետի ի տէր խնդալ: Առ սրբազն Հայր Միքա-
յէլ վ. Զամշեան: Լիզայի վրայ (ոտան.) ի պարոն Յարութիւնէ
Սհակեան Նոր-Ձուղայեցւոյ վերաբնակելոյ ի Բոմբայ քաղաք
Հնդկաց, դարձեալ ի նոյն պարոնէ յօրինեալ (ոտան.) 2 օ-
րինակը. սրբազն Ներսիսի վիճակաւոր Արքեպ. ամենայն
Հայոց բնակեցելոյ Վրաստան ի Նիկողայոսէ Կայսեր Ռուսաս-
տանի: 11 տարեկան Գէորգ Շահնազարեանի ճառը, որ ասուե-
ցաւ նահանգական ուսումնարանումը Ներսիս կաթ. ներկայա-
նալու ժամանակ (հայերէն-ռուսերէն) Ներսիս կաթ. օծման
հանդիսին: Վկաքը փառաց Հայաստանի:

2 Տետրակ. — Հրաժարումն ի բարեկամաց և այլն:

Փառածալ

Տետր. 1. Առ հանդէս մտից Նորին վեհափառութեան Տ.
Ներսիսի սըր. հայրապետի և ծայրագոյն կաթողիկոս ամենայն
Հայոց ի Հայաստան յ-8 մայիսի 1846 թ.

Բան ասացեալ ի Ստեփաննոս արքեպիսկոպ. Արդութեանց:
Ի ներկայանալ աշակերտաց նահանգական ուսումնարանի
Երեանու թուն Գաւիթ խան Շատուրեանի մետասանամեայ մա-
նուկն Գէորգ Շահնազարեան ասաց զհետազայ... բանս ի հա-
յոց բարբառ. Այլ աշակերտ նահ. ուսումնարանի եղբոր որդին
Յովիհաննէս կաթողիկոսի՝ երկոտասնամեայ մանուկն Գրիգոր
կարդաց զհետ... ոտանաւորս ի Ռուս լեզու

Տետր. 2. Առ բարեծնունդ և սիրելի աշակերտ իմ նահան-
գական ուսումնարանին Տիխիսոյ ի 25 մայիսի:

1838 ամի յԵջմիածին. Դաշտն Կոտայի, Շուլաւեր, Լոռի,
Փամբակ, Անի, Սարդարապատ, Արմավիր, Եջմիածին և բնակու-
թիւն մեր անդ: Վերադարձումն բարօնին. օրհնութիւն սրբալոյս
միւռոնի, ելն մեր յԵջմիածնէ. Երեան. Ժուլի կամ նոր Ելոյի-
զադ, (նամակ). Հարսանիքն մեր հոգեոր էառ զլրումն. նորին
վեհափառութիւն:

Նոյն մեծութեամբ աշխարհաբար

Տետր. 1. Լինդայ պատմութիւն. Կարլոս մեծի պատմ.
Երազ Պետրարկայ բանաստեղծի:

2. Նամակներ բարեկամի մօտ, բարեկամութեան
զատիկը, ողջում ախպեր. Պարրօտ, Լօնալլութիւն. Քրիստոսի
ծնունդը, Տարեմուտ, Թաղումն, հայրենասիրութիւն, Պարրօտի
բնութիւնը, Պարրօտի գրութիւնք. Սուդ իմ աշակերտ Աղամ-
ջանեանի վրայ:

3. Թուրքի աղջիկը. Խչի հարսանիքը. Բարեկամի
մօտ: —

4. Ղարիպ. (ոտան.) Յունայնութիւն աշխարհի,

այդին Ղորղանովին. Եշն ու բլբուկը. (ոտան.) Աչքի լոյս ջան
դարդ մի անիլ (ոտան):
5. Առաջին սէրը. Մաղկի վանքը. Վանի—Փա-
րիխան:

Նոյն մեծութեամբ ոլուսերէն

Հինգ հատ պաշտօնական գրութիւններ այս և այն պե-
տական հաստատութեան:

1. Краткий исторический очеркъ (տպուած) г. Эривана (въ 2 экз.).
2. Отчего аптекарей называютъ девяносто девятый.
3. У ибнцевъ.
4. Ученный споръ въ Эривани 18 ноября.
5. Троє западныхъ мудреца сопровождаемые христіанскими муллою.
6. Извлечениe изъ исторіи Мойсея Хоренского писанной имъ около 485 или 490 г.
7. Краткое правило отъ словеснаго употребленія туркскаго языка.
8. Общее замѣчаніе и преподаваніе и недостатки онаго и программы для первоклассныхъ двухклассныхъ училищъ.

Առանձին Թղթերի վերայ:

1. Հրաժարումն բարեկամաց:
2. Աշակերտք առ հրաժարումն ընկերակցաց իւրեանց:
3. Վերջին հրաժարական քաջազօր արքային Հերակլի:
4. Բան տասացեալ յաւուր տօնի սուրբ Զատկին յեկեղեց-
ւոց վերացման ս. խաչին ի Մոսկով ի 1836 ամի:
5. Այլ բան համառօտ ի վերայ յարութեան:
6. Նոյնը:
7. Մտածմունք ի վերայ խաչելութեան Տեսոն:
8. Յունայնութիւն աշխարհային բախտին:
9. Նահատակութիւն սրբոց Վարդանանց:
10. Գիշերն ամարային:
11. Ի վերայ հայրենասիրութեան:
12. Ի վերայ նաւազնացութեան:
13. Ի վերայ հաղորդութեան:
14. Ամարային առաւօտն ի գիւղ:
15. Մուս գարնան:
16. Ծնունդ Քրիստոսի (ոտան):
17. Յաւուր տօնախմբութեան բարեկամի միոյ:
18. Առ այլ բարեկամ մի ընդ փոքր ընծայի իւկը յաւուր
ծննդեան Փրկչին:
19. Կղզին Բօլգհոց (ի Կարամզինէ):
20. Թայիսայ (հին բալադ ոտան.)

21. Հեկտոր (ոտան):

22. Խնդամիտ զգացմունք երախտագէտ հայկազնոյ վասն ազատութեան հայրենեաց իւրոց ասացեալ յԵրևան յամի 1826 ի վեշտասան հասակի իւրում (ոտան.):

23. Սրբազնագոյն Քահանայապետ գթածագոյն հովուապետաեր (ոտան.):

24. Բան հրաժարական (ոտան.):

25. Կարօտութիւն նախնի վայելչութեան հայրենեաց իւրոց ասացեալ ի 1824 ամի Երևան (ոտան.):

26. Ողբերգ. ի վերայ մահուան բազմերախտ ուսուցչին իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարեանց, ազնիւ բարեկամին իմոյ Աղամջանեանց Եփրազմանեան և քաղցր հօր իմոյ Յարութիւն Արովեանց զորոց զբոթալուրն ի միում շաբաթող ստացայ ի լինելն իմ ի Դերպատ 1834 12 նոյեմ (ոտան.):

27. Աղօթք առաւօտեան (ոտան.):

28. Նախասահմանութիւն (ոտան.):

29. Դարուն (ոտան.):

30. Աղերս գոհութեան առ ամենաբարձրեալն (ոտան.):

31. Ծնողասէր աղջիկն և մեծահոգի հարուստն (ոտան.):

32. Ոլք ի վերայ Միրզաջանի քաջ գնդապետի հայկազնոյ, որ մուտա ի 1837-ի 1 փետր. այլ լի չնորհօք, սիրելի հասարակութեան, յառոյդ ժամանակի զլկեալ ի կենաց (ոտան.):

33. Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ ի 1829 թ. 28 սեպ.

34. Մուռ Հայկայ ի Հայաստան ու արհաւիրք (ոտան.):

35. Տիսուր տեսարան սքոյն և պքազգեաց Հայաստանի առ նահատակ. սրբոց Վարդանանց (ոտան.):

36. Առ Վարդան (ոտան.):

37. Աղերս (ոտան.):

38. Ի վերայ դամբարանի բազմերախտ ուսուցչի իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարեանց ի 1836 ամի 15 մայիսի ի Ն. Նախիջևան:

39. Ի լինելն իմ ի Մոսկով 1836 ամի 18 մարտի առաջատեան:

40. Առ Էմ. Կ.

41. Առ Մ. Ա.

42. Առ Էմ.

43. Առ Ն.

ուսանաւոր

44. Բան ասացեալ ի վերայ դամբարանին սիրելի աշակերտին իմոյ Ղարիմազ Արդութեանի ի բերանոյ ընկերաց իւրոց, որ վախճանեցաւ ի 29 մարտի 1840 ամի 16 ամի կենաց իւրոց:

45. Սուդ ի վերայ մահուան սիրելւոյն իմոյ և ուսուցչի Վալտերի ի գիշերին ուր ես պահապան եղէ նմա ի սենեկի իւրում. 1831 14 սեպտ. ի Դերպատ (ոտան.):

- Եւ պ. Ղօրդանեանի մօտ գտնուած յիշատակարանում 19
կտոր թէ ոտանաւոր և թէ արձակ, որոց ցուցակը տպուած է
”Կռունկ”-ում և «Արձագանք»-ում:
46. Ազնէս պատմական աշխարհագրութ.
 47. Ֆէօդորայ կամ որդիական սէր.
 48. Օվսաննա (տպուած Կռունկ-ում)
 49. Զանդի (տպուած)
 50. Ազնուամութիւն և չնորհալիութիւն:

Մօտ 30 ձեռագիր նամակներ էլ գտել է պ. Երիցեանը Ս.
Եջմիածնի արխիւում:

Գերմաներէն

- 1) Ein Blick über den Ursprung, Volkstümlichkeit, Sprache, sitten und gebräuche der Kurden.
- 2) Die Kurden.
- 3—4) Zwei unbedingte Briefe an einem liebsten Freund aus Petersburg am 1835 den 27 und 28 Januar.
- 5) Ein Zeugniss vom Ararat.

Ներսէս Տէր-Կարապետեանց:

